

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Պրոֆ. Վ. ՌՇՏՈՒՆԻ

ԲՐՈՒՍԻԼՈՎՅԱՆ ՃԵՂԻՌԻՄԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1943

23227

ՊՆԿՐԱՆԻՒՄ

Բրնուխեր Լուսին

Տեղագրություն

9(4/9)/1" 1914-1918" + 9(47)/26

Պրոֆ. Վ. ՌԵՏՈՒՆԻ

ԲՐՈՒՍԻԼՈՎՅԱՆ ՃԵՂՔՈՒՄԸ

23227

873
A $\frac{11}{38941}$



Проф. В. РШТУНИ
БРУСИЛОВСКИЙ ПРОРЫВ

(На армянском яз.)

Издание Ереванского Госуд. Университета
им. В. М. Молотова

ՎՖ 00712, պատվեր 91, տիրաժ 300. ստորագրվել է ապրիլի 13/III 1943 թ.
ՀՍՍՐ Ժողկոմսովետի կողմից թերթերի և ամսագրերի տպարան, Երևան.

ԲՐՈՒՍԻԼՈՎՅԱՆ ՃԵՂՔՈՒՄԸ

Առաջին անգամը էլ, որ մեր սոցիալիստական հայրենիքի սովետական ժողովուրդները գերմանական իմպերիալիստական գեշտտիչներին դուրս են վճռում մեր ազատ ու անկաշկանդ երկրից: Փաշիզմի անարգ նախորդները դեռ 1918 թ., առաջին իմպերիալիստական սրտերագմի վերջին տարին, փորձեցին տիրել մեր երկրին, փորձեցին ոչնչացնել սովետական կարգերը: Բայց Լենինգրադի վրա կազմակերպած նրանց արշավանքը ձախողվեց հենց սկզբից, փետրվարի 23-ին Պսկովի մոտ գերմանական հափըշտակիչները ջարդվեցին և հետ շարտվեցին: Իսկ 1918 թ. վերջերին էլ նրանց ավեր ու կողոպուտ սկսող բանդաները խոթտակիչ հարվածներով վտարվեցին Ուկրաինայից և մեր մյուս սովետական երկրներից:

Ռուսական քաջարի բանակը նույնիսկ ցարական կարգերի դավաճանությամբ հազեցած մթնոլորտում է վիճակի եղավ խոշոր պարտության մատնել գերմանական ու ամստրեական զորքերին, երբ նրա գլուխ կանգնեց ռուս զինվորի մարտական հիանալի ունակությունները հասկացող և հարկալիք ձևով զործագրել կարեցող այնպիսի զորավար, ինչպիսին էր գեներալ Բրուսիլովը:

Այս նշանալիոր գեներալի անվան հետ է կապված առաջին իմպերիալիստական սրտերագմի շրջանում ռուսական բանակի հուշակալիոր գրոհը 1916 թ. մայիս-հունիս ամիսներում ավստրոգերմանական զորքերի դեմ Հարավ-Արևմտյան Ֆրոնտում, գրոհ, որ այդ սրտերագմի ռազմական կարևորագույն գեպքերից մեկն է և իրավամբ համարվում է այդ ժամանակ գերմանական իմպերիալիզմի ջախջախումը նախապատրաստող առաջին լուրջ հարվածը:



1914—1918 թ. թ. առաջին իմպերիալիստական պատերազմի հենց սկզբին, օգոստոսի վերջին Ռուսաստանը իր դաշնակիցներին՝ Ֆրանսիայի և Անգլիայի պահանջին ընդառնջելով, Մամուսնովի և Ռենենկամպֆի բանակները հարձակման հանց Գերմանիայի դեմ Արևելյան Պրուսիայում: Այդ թանկ դնով Ռուսաստանը թեթևացրեց Արևմտյան Փրոնտի դրուժյունը, դերմանական դրոհը դեպի Պարիզ դանդաղեց, ապա ի վերջս անհաջողությամբ մատնվեց:

Ռուսական բանակն զգալի հաջողություններ ունեցավ 1914 թ. երկրորդ կիսում և 1915 թ. առաջին ամիսներին Հարավ-Արևմտյան Փրոնտում: Օգոստոսին սկսված հարձակումն Ալստրո-Հոնդարիայի դեմ վերջացավ Գալլիպոլի դրափումով: 1914 թ. օգոստոսի 21-ին Բրուսիլովի և Ռուզիկու գործերը մտան Լվով, իսկ 1915 թ. մարտի 9-ին ընկավ նշանավոր Պերեմիշլ բերդը:

Գերմանիան հարկադրվեց Արևմտյան Փրոնտից մեծ ուժեր փոխադրել Արևելյանը՝ իր ջարդված դաշնակցին փրկելու համար, իսկ ցարական Ռուսաստանը անկարող ու անպատրաստ դտնվեց իր առաջին հաջողություններն ամրացնել ու ծավալել:

«Ռազմական գերատեսչությունից ամբողջապես փառած կաշառված ապարատը արկեր չնախապատրաստեց: Դանդաղաշարժ գեներալները չէին կարողանում մոտեցնել հրետանին և սեղերվները: Գերմանական և ավստրիական զորքերն արագորեն վերադարձրին կորցրած մարզերը: 1915 թ. ապրիլի 25-ին գերմանացիք զբաղեցրին Լիբավան՝ սպառնալով Ռիգային: Ալստրիացիք մայիսի 20-ին հետ խլեցին Պերեմիշլը, իսկ հուլիսի 9-ին ուսուները թողեցին Լվովը: Գերմանացիք հուլիսի ընթացքում զբաղեցրին Լեհաստանի բոլոր ռուսական բերդերը, 23-ին ընկավ Վարշավան: Լեհաստանը կորցնելով՝ ռուսական զորքերը թողեցին նաև Լիավան» (История гражданской войны в СССР, т. I, Огиз, 1935 г., стр. 15):

Այսպես վերջացավ Ռուսաստանի համար պատերազմի երկրորդ տարին: Տնտեսապես հեռաժողով, ռազմապես անպատրաստ, դափաճանություն ու լրտեսություն ցանցերում խճճված ցարա-

կան Ռուսաստանը 1915 թ. ընթացքում գրկվեց անազխն տերևաորիայից, անխնիկայի և կենդանի ուժի խոշոր կորուստներ ունեցավ: Նույն տարվա աշնանից ուստական Փրոնտը ձգվում էր Ռիգայից մինչև Ռուսիկայի սահմանը համարյա ուղիղ դժով և նրա ամբողջ երկարությամբ թշնամի լանդշեյտներն արդեն անցել էին սրտիցիոն պատերազմի եղանակին: Այդ ամբողջ Փրոնտում բիչ-չառ խոշոր ուղմական բաղխումներ կամ նշանակալի իրադարձություններ սեղի չունեցան մինչև 1916 թ. դարնան վերջը, այսինքն մինչև Բրուսիլովի հարձակումը Հարավ-Արևմուտյան Փրոնտում, եթե չհաշվենք 1915 թ. վերջին Սերբիային օգնելու նպատակով Հարավ-Արևմտյան Փրոնտի ձախ թևում ուստական 7-րդ լանդի ձեռնարկած անհաջող հարձակումը, որ իր նպատակին ծառայել չկարողացավ: Սերբիան ջախջախվեց, իսկ Բուլղարիան միացավ Գերմանիային և Ալստրո-Հունգարիային (Л. В. Ветошников, Брусиловский прорыв, Воениздат. 1940 г., стр. 5—6):



Գերմանիայի 1916 թ. ուղմական գործողությունների պլանի համաձայն մնական հարվածը պետք է ուղղվեր Պրանսիայի դեմ: Գերմանական հրամանատարությունն իր հակառակորդներին հարձակման անցնելու հնարախորությունից և առաջելությունից պրկելու և մարտական նախաձեռնությունն իր ձեռքում պահելու նպատակով փետրվարին գրոհ սկսեց Վերդենի վրա, որը «ամբողջ Փրանսիական Փրոնտի հենակետն էր»: Գերմանական գլխավոր շտաբի պետ գեներալ Պալկենհայնը Վերդենի վրա արշավելու նշանակությունը համարում էր այն, որ դա կհարկադրի Պրանսիային իր ամբողջ ուժերը կենտրոնացնել Վերդենի մոտ, և «այն ժամանակ մենք կկարողանանք նրա ուստում Փրանսիական գլխիկիաներն ազալ ինչպես ջրաղացում» (Л. В. Ветошников, Брусиловский прорыв, стр. 10):

Թեև 1916 թ. գերմանական այդ պլանին դեմ էին Հինդենբուրգը և Լյուդևիգորֆը, որոնք առաջարկում էին գլխավոր հարվածն ուղղել Ռուսաստանի դեմ, վերջնականապես ջախջախել 1914—1915 թ. թ. կոսիկերում մեծապես միասլած ցարական լանդը, սորա մնական պայքար սկսել անդր-Փրանսիական ուժերի դեմ, — բայց այդ պլանը հավանություն գտավ Վիլհելմ II-ի կողմից և կենսագործվեց:

Ուշադրութեան չարժանացալ նաև Ախտորո-Հունդարական գլխավոր հրամանատարութեան առաջարկը, որի համաձայն Փր-բանտխայից առաջ մճռական հարվածով անհրաժեշտ էր համար-վում ո՛չնչացնել խտրական ուժերը: Սակայն ախտորո-Հունդարական գլխավոր շտաբի պետ Կոնրադը որոշեց իր սլլանն իրա-գործել Գերմանիայից ծածուկ, և քանի որ նրան գերմանական դիվիզիաներ չարամաղբիցին, նա այդ նպատակի համար օգտա-գործեց իր ստբող ռազմական ուժերի կեւը, լախազույն զորա-մասերը հանելով ռուսական Ֆրոնտից այն հաշվով, թե Ռուսաս-տանը նախորդ տարիների պարտություններից հետո հարձակո-ղական դործողությունների համար անզոր է արդեն (Л. В. Ве-тошников, Брусилловский прорыв, стр. 6—7):

Ռուսաստանի և նրա դաշնակիցների 1916 թ. ռազմական պլանը նույնպես նախատեսվում էր ընդհանուր հարձակում բոլոր Ֆրոնտներում, որի ծրագիրը կազմված էր դեռ 1915 թ. դեկ-տեմբերին, իսկ իրագործումը նախ նշված էր 1916 թ. գարնանը, ապա հետաձգվեց հունիսին: Հենց հարձակման այդ պլանն է, որ նախորդ հայտնի դարձավ Գերմանիային, և նա կանխեց այն, փետրվարին գրոհ սկսելով Վերդենի վրա:

Սակայն այդ չխնդարեց, որ փետրվարի 28-ին (12/III) Անտանտի պետությունների նոր ռազմական խորհրդակցություն-նը ստեղծված դրությունը քննելով, դարձյալ այն եզրակացու-թյան դա, որ անհրաժեշտ է շարունակել հարձակման նախապատ-րաստությունները և բոլոր Ֆրոնտների միջև սերտ փոխադարձ գործակցություն ստեղծել: Մասնավորապես Ռուսաստանն առա-ջադրանք ստացալ իր ստբող Ֆրոնտում նախապատրաստվել ընդհանուր հարձակման համար և այդպիսով արգելել Գերմա-նիային Արևելյան Ֆրոնտից Արևմտյանն ուժեր փոխադրելու:

Այդ ժամանակ մեծ կարևորություն էր ստանում Ռուսիայից դերբի հարցը: Հստկապես Փրամտան ամեն ճիգ անում էր, որ Ռուսիային Անտանտի կողմը դրալի, իսկ այդ հնարախոր կը-զանար, և թե Ռուսաստանը զգալի ուժեր կենտրոնացնե՞ր Բուլ-ղաբխայի դեմ: Այդ ստթիվ Փրամտական ռազմական միախայի պետը Ռուսաստանում՝ գեներալ Պոն դեռ փետրվարի 19-ին (3/III) Փրամտական զորքերի գլխավոր հրամանատար Ժոֆֆրե հանձնարարությամբ գրում էր գեմ. Ալեքսեևիին, ռուսական գե-րազույն գլխավոր հրամանատարի շտաբի պետին, որ Ռուսիայի-կան կատախարությունը չի կարող երկար շարունակել իր չեզո-

քուժիչունը և որպեսզի նա Գերմանիայի և Ալսաթո-Հունդարիայի սպառնալիքները և ճնշումից չվախենա և Անտանտի կողմն անցնի, անհրաժեշտ է, որ նա «1) Հնարախորուժիչուն ունենա անպայման հույս դնել դաշնակիցներին, մասնավորապես ուսսահան բանակի անհարպազ ավակցութեան վրա. 2) վստահութիւն ունենա, որ իր ավակցութեան դնով նա հետագայում ձեռք է բերելու ավստրիական Բուկովինա և Տրանսիլվանիա պրովինցիաները...»: Ապա գեներալ Պոն մտածանշում է, որ սվյալ հիմունքներով Ռումինիայի հետ արդեն սկզբունքային համաձայնութեան հանգել են, մնում է լուծել հարցի ուղղման կողմը. «Ռումինիայի ձգտումներին համապատասխանող պլանով՝ այդ պետութիւնն իր վրա կլէրցներ ուղղման կործակութիւններ վարել ավստրիական պրովինցիաներում, իսկ Ռուսաստանի վրա կզբփէին Գանուբի ուղղման կործակութիւնները՝ Բուլղարիայի վրա հարձակելու հետ. Ռուսաստանի դուրս բերելիք ուժերի նկատմամբ դեռ պետք է համաձայնութեան գալ (ուումինացիք անհրաժեշտ են համարում դրա համար 200000—250000 մարդ)»:

(Центральный Государственный Военно-Исторический Архив, Наступление Юго-Западного фронта в мае-июне 1916 года, сборник документов, Военное издательство, М., 1940 г. стр. 53 и 54):

Սակայն ուսսական գլխավոր շտաբը չհամաձայնից ժոֆֆրի ադր պլանի հետ: Այդ առթիվ գեներալ Ալեքսեևը փետրվարի 21-ին (Ճ/III) գրում էր արտաքին գործերի մինիստր Սաղոմովին՝ թէ իր ունեցած տեղեկութիւնների համաձայն «...բալական որոշակիւթրեն հաստատում է թէ՛ մեր ներկա դաշնակիցներին և թէ՛ արագա դաշնակիցներին ցանկութիւնը, որ մենք մեր զորքերից 250000 մարդ ուղարկենք պատերազմելու բոլղարները դեմ և օգնենք ուումիններին դրափելու Տրանսիլվանիան և Բուկովինան»: Իր վերաբերմունքը գեպի այդ «ցանկութիւնը» նա ձևակերպում է այսպէս. «Ռուսաստանին և թաղավորին ծառայելու պարտականութեան համաձայն՝ ես իրավունք չունեմ գերադույն գլխավոր հրամանատարին տեղեկացելու այդպիսի պլանի ընդունման և այդպիսի ուղղման ավանտյուրային միանալու անհրաժեշտութեան մասին: Այլ անուն տալ չեմ կարող, սվյալ պարագայում և պայմաններում, մեզ առաջարկվող այդ պլանին: Մեր ֆրոնտը ձգվում է 1200 վերստ երկարութեամբ, մեզ առաջարկում են 600 վերստ էլ երկարացնել այն»: Ապա Ալեքսեևը հան-

դուժ է աշտարակի եղբարացուժյան. «...մեր բոլոր ջանքերը սկսաք է կենտրոնացվեն Ֆրոնտի մեզ համար կենսական նշանակություն ունեցող տեղամասերում», իսկ «այժմ ուժերնական և Ֆրանսիական պլաններին միանալը մեզ կթուլայցի, մեր բանակը չափից դուրս կտարածի, հնարավորությունից կզրկի ո՛չ միայն բավականաչափ ուժեր հավաքելու գերմանացիներին և ավտարիացիներին հարվածելու համար, այլև գեպի Պետրոզերգ և գեպի Մոսկվա ուղղված նրանց ձեռնարկումներին հակազդելու համար» (Наступление Юго-Западного фронта..., стр. 57-58):

Ալեքսեևը նույն խմատով պատասխան է ուղարկում Ժոզֆըրին և ի միջի այլոց աշտարակի դիտողություն է անում. «Իմ կարծիքով մենք կցրենք մեր ուժերը, շատ նպատակների հետևից կընկնենք, նախքան գլխավոր, հիմնական նպատակին հասնելը գլխավոր թշնամու դեմ: ...Մեր բանակի հաղթանակը գերմանական բանակի վրա կլուծի նաև ուժերնական հարցը...» (Նույն տեղում, էջ 60):

Թեև Ժոզֆըրը Ռուսներին օգնելու հարցը հետազայում էլ շարունակում էր համառորեն հարուցել, բայց ուռևական հրամանատարությունը շարունակեց դիմադրել, կարողացավ այդ դեպքում չզիջել իր խմբերիալիտական ուժեղ դաշնակիցներին պահանջին, որոնք սովոր էին իրենց գործերը կարգավորել ուռև գլխավորի արջան հաշվին:

Սակայն ուռևական գլխավոր շտաբը չհրաժարվեց կատարել իր դաշնակիցներին մի այլ պահանջը և Ֆրանսիական բանակի դրուժյունը վերգենի մոտ թեթևացնելու համար, առանց համարադատական նախապատրաստություն, մարտի 5—8 (18—21) հարձակում սկսեց Արևմտյան Ֆրոնտում և մարտի 16—ին (29—ին) — շուսիտային Ֆրոնտում: Հարձակումն ամենևին իր նպատակին չձուտարից և հարկ եղավ շուտով դադարեցնել այն:

Այդ անհավող հարձակման առթիվ գեն. Ալեքսեևը հետևյալ փաստերն է հաղորդում ուռևական հրամանատարների աշխատանքի որակի, Ռուսաստանի ուղմական պատրաստության և պահանջկոտ դաշնակիցներից սրբավերք օժանդակություն մասին. «Թախձալի է դիտակցել կառավարման մեր խիստ թերությունները պատերազմի 20 ամսի հարուստ փորձից հետո, բայց է՛լ ավելի տաղնապալի է այն հարցը, որ չափազանց թույլ ենք մենք ծանր հրետանու և դրա արկերի պատրաստման գործում: Վերջին սովյալները, որ ես ստացա, դրուժյունն անհուսալի են

պատկերում — հայրենի արտադրութիւնը չի կարող տալ մեզ բաշխարան քանակութեամբ ո՛չ միայն հրանոթներ, այլ նույնիսկ արկեր թեկուզ մեկ՝ ո՛չ պակաս քան 20 օր տևող դործողութիւն կատարելու համար: Անդրխայում և Ֆրանսիայում ծանր հրանոթներ... ձեռք բերելու փորձը լիարժանք անհաջողութիւն կրեց»:

Զարմանալի չէ, որ երբ այդպիսի պայմաններում էր կատարւում հարձակումը, դործին չէր օգնում նույնիսկ այն, որ «հետեակը դրոհի էր գնում քաջարի կերպով», որովհետեւ «աւանց ծանր հրետանու» մեր հետեակին ծանր կորուստներ են բաժին ընկնում, որոնցով հարկ է լինում դնել առաջխաղացութիւնը», — արձանագրում է ուստական գլխավոր շտաբի պետը (Наступление Юго-Западного фронта..., стр. 46-47 и 68):

Բայց Ռուսաստանի դաշնակիցները քիչ էին հաշիվ նստում նրա այդպիսի դրութիւնն հետ, մասնավորապես պահանջկոտ էր Ֆրանսիան, քանի որ զերմանական զրոհը Վերդենի վրա ուժեղանում էր, և հարկավոր էր ելք գտնել՝ Ռուսաստանի անհամար մարդկային ուժերը դործի դնելով:

Ապրիլի 2-ին (15-ին) Ժոֆֆրը Ռուսաստանին հիշեցնում է իր պարտականութիւնը և խնդրում «... ուսւ դաշնակիցներին, Եանտիրիկի (Ֆրանսիական գլխավոր հրամանատարի Կայսրի. — Վ. Ռ.) խորհրդակցութիւններում ընդունված որոշումներէ համաձայն, բոլոր ազատ ուժերով հարձակման անցնել, հենց որ կլիմայական պայմանները այդ թույլ կտան...»:

«Անհրաժեշտ է, հետեարար, որ ուստական հարձակման նախապատրաստութիւնը շարունակվի ծայրահեղ լարումով և ամբարտի, ինչքան հնարափոր է լրիվ չափով, ձյունահալը վերջանալու հետ, որպեսզի կարելի լինի հարձակումը սկսել այդ մոմենտում» (Наступление Юго-Западного фронта..., стр. 46):

Ահա այդ դաշնակցային պարտականութիւնը կատարելու համար է, որ ուստական գլխավոր հրամանատարութիւնը դործի անցավ և իր ամբողջ ֆրոնտում ընդհանուր հարձակման ժամկետ Նչեց հունիսի կեսերը: Ապրիլին, երբ շտապ և ուժեղ սեփազով սկսվեցին հարձակման նախապատրաստութիւնները, ուստական բռնակները հետեյալ ձևով էին դասավորված սահմանի երկարութեամբ:

Հյուսիսային ֆրոնտը, որի գլխավոր հրամանատարն էր գե-

ներալ Կուրոպատկինը, ձգվում էր 240 կիլոմետր տարածության վրա՝ Ռեդայի ծոցից մինչ Նոյո-Ալեքսանդրովսկի (Կլինսկից զիչ հարավ), պաշտպանում էր Պետրոգրադի ուղղությունը և իր կազմում ուներ երկու բանակ (12-րդ և 5-րդ), իսկ իրեն սեղերով 7 դիվիզիա:

Արևմտյան ֆրոնտը, որի գլխավոր հրամանատարն էր գեներալ էվերտը, ձգվում էր 480 կիլոմետր տարածության վրա՝ Հյուսիսային Ֆրոնտի հարավային սահմանից մինչև Սարևի-Կոլել երկաթուղին, պաշտպանում էր Մոսկվայի ուղղությունը և իր կազմում ուներ երեք բանակ (1-ին, 2-րդ և 4-րդ), իսկ իրեն սեղերով 9 դիվիզիա:

Հարավ-Արևմտյան Ֆրոնտը, որի գլխավոր հրամանատար էր նշանակված մարտի կիսին գեներալ Բրուսիլովը, ձգվում էր 360 կիլոմետր տարածության վրա՝ Արևմտյան Ֆրոնտի հարավային սահմանից մինչև Ռուսինիայի սահմանը, պաշտպանում էր Կիևի ուղղությունը և իր կազմում ուներ չորս բանակ (8-րդ, 11-րդ, 7-րդ և 9-րդ): Այս Ֆրոնտը սեղերով դիվիզիաներ չունեցրեց (Ha-ступление Юго-Западного фронта..., стр. 12—13 и Л. В. Ветошников, Брусилловский прорыв, стр. 19—20):

Այս երեք Ֆրոնտում ուսուսական բանակների և նրանց ղեկ հանդիսանալով մարտի-դերմանական զորքերի թվական հարաբերակցությունը, ըստ գեներալ Ալեքսեևի մարտի 22-ի ղեկուցման, հետևյալն էր (ամյայնները վերաբերում են փետրվարի վերջին և մարտի կիսին) .—

	Ռուսական ուժերը	Ավստրո- գերմանա- կան ուժերը	Ռուսական ուժերի գե- րակցու- թյունը
Հյուսիսային Ֆրոնտ . . .	466000	200000	266000
Արևմտյան Ֆրոնտ . . .	754000	420000	334000
Հարավ-Արևմտյան Ֆրոնտ	512000	441000	71000
Ընդամենը . .	1732000	1061000	671000

Ուժերի այսպիսի դասավորությունը և ուսուսական զորքի գերակշռության տարբեր աստիճանը զանազան Ֆրոնտներում հիմք էր ծառայում այն բանի համար, որ ուսուսական գլխավոր

Հրամանատարութիւնը տարրեր դէր նշէր Փրոնտներէց ամեն մեկի համար նախապատրաստուող հարձակման մէջ (Наступление Юго-Западного фронта..., стр. 69—72):

Անցնենք այդ հարցին:



Ապրիլի 1-ին (14-ին) Մոզելյոյում՝ ուսասկան Գերադույն գլխավոր հրամանատարի կայանում հրապարակեց ուղղակի խորհրդակցութիւն ուսասկան բանակների առաջիկա հարձակման հետ կապված հարցերի քննութեան և լուծման համար: Նախադահում էր Նիկոլայ II, ներկա էին երեք Փրոնտի գլխավոր հրամանատարներն իրենց շտաբներէ պետերի հետ միասին, ուղղակի միտնար Շուվալսոյը, զենեբալ Ալեքսեևը և մեծ իշխան Սերգեյ Միխայլովիչը, նաև Բրուսիլովի նախորդը՝ զեն. Իվանովը:

Գերադույն գլխավոր հրամանատարի շտաբի պետ զեն. Ալեքսեևը իր ղեկուցման մէջ նշեց, որ զաջնակիցներէ փետրվարի 28-ին (մարտի 12-ին) Շանտիլիեում դուռարված ուղղակի խորհրդակցութեան որոշումով առաջիկա մայիսին Անտանտի բոլոր պետութիւնների ընդհանուր հարձակման անցնելու հարցը արդեն լուծված է, որոշված է նաև այն խնդիրը, որ հարձակումը պետք է սկսեն ուսասկան բանակները մայիսի սկզբին (հին տոմարով), իսկ անգլիական և ֆրանսիական բանակները միայն մայիսի կիսին պատրաստ կլինեն հարձակման համար: Թեև ուղղակի իրադարձութիւնների հետ կապված հանդամանքներ կարող են մի քիչ ուշացնել ուսասկան բանակների հարձակման ժամկետը, «բայց, — ընդգծեց զեն. Ալեքսեևը, — նախապատրաստութեան բոլոր միջոցառումները մենք պետք է մերժացնենք ըստ հնարավորին մայիսի 1-ից ավելի վաղ և ամենին ո՛չ ուշ այդ ժամանակից, նկատի ունենալով մեր Փրոնտում արդեն ապրիլի վերջին հակառակորդի ավելի կամ պակաս ուժեղ հակահարվածի համարակալութիւնը» (Наступление Юго-Западного фронта..., стр. 68—69):

Այդ զեն. Ալեքսեևը, հիմք ունենալով ուսասկան երեք Փրոնտում ուսասկան և աստրո-գերմանական ուժերի մեզ արդեն ծանոթ հարաբերակցութիւնը, առաջարկում է հարձակումն իրադրծել հետևյալ պլանով: — գլխավոր հարվածը թշնամուն հասցնելու է Արևմտյան Փրոնտը՝ ուղղութիւն ունե-

նախով դեպի Վիլնո. Հյուսիսային Փրոնտը իր գլխավոր հարվածն ուղղելու է թշնամու դեմ Դվինսկի ուսյոնում, զարձալ դեպի Վիլնո շարժվելու և Արևմտյան Փրոնտին օգնելու նպատակով. իսկ Հարավ-Արևմտյան Փրոնտը սկսեց է սպառաքանովի հարվածելու թշնամուն Ռոսլոնյի ուսյոնից միայն այն ժամանակ, երբ առաջին երկու Փրոնտում հարձակումը հաջող ծափարկած կլինի (А. А. Брусиллов, Мои воспоминания, 2-ое изд. М. 1941 г., стр. 178 и Л. В. Ветошников, Брусилловский прорыв, стр. 23):

Արեքսեյի առաջադրած ուսյոնական դորժողությունների սրբանի նկատմամբ ուսյոնական երեք Փրոնտի գլխավոր հրամանատարները լսողորոշին տարբեր դերք բռնեցին:

Հյուսիսային Փրոնտի գլխավոր հրամանատար դեմ. Կուրոպատկինը, ինչպես նշում է Արեքսեյը Նիկոլայ II ներկայացրած իր զեկուցման մեջ, հարձակման անցնելու տակտիկայի դեմ մի շարք առարկուձեթյունների անելուց հետո և իր Փրոնտի դորքի քանակը և դիտումը նշելով, հանգում է հետևյալ եզրակացությանը. «Այսպես ուժերով հարավոր է միայն ապիլի կամ սրտես ակախի սրաշարանություն» (Наступление Юго-Западного фронта..., стр. 76): Երուսիլովն իր հիշողություններում Կուրոպատկինի տեսակետն աջակց է շարադրում. «...հարապարեց, որ իր Փրոնտի հաջողության վրա հույս դնել շատ դժվար է և, որ, նրա կարծիքով, ինչպես այլ երկրում է հարձակման նախորդ անհաջող վորձերից, զերմանացիների Փրոնտի ճեղքումը լսողորոշին անխնայական է, որովհետև նրանց ստրացրած շերտերը այնքան զարգացած և ուժեղ կերպով սնվացրած են, որ դժվար է հաջողություն ենթադրել. ապիլի շուտ սկսեց է ենթադրել, որ մենք հակադասական ապարդյուն կորուստներ կունենանք» (Брусиллов, Мои воспоминания, стр. 178):

Արևմտյան Փրոնտի գլխավոր հրամանատար դեմերալ էյլերտը, ըստ Արեքսեյի փերեում նշված զեկուցման, սրաշարանում էր այն միտքը, որ թշնամուն «...հարկավոր է հարված հասցնել միայն որևէ մեկ փրանում, որովհետև մի քանի միտածանակցա հարվածի համար մենք ո՛չ դորք, ո՛չ էլ հասկապես նյութական միջոցներ ունենք, գլխավորապես ծանր հրետանի և արկեր, այն ինչ ստանց ծանր հրետանու զերապանցության չի կարելի հույս դնել հաջողության վրա» (Наступление Юго-Западного фронта..., стр. 77): Այսպիսով, էյլերտը, ըստ էս-

թյան, ինչպես իրախցերը են նկատում է Բրուսիլովը, «ամբողջությամբ միանում է Կուրսկապոկլինի կարծիքին, հաջողութեան չէ հավատում և ենթադրում է, որ այնլի բավ կլինե՞ր շարունակել սրբաշարանողական զործողութեան եղանակին հետեյել...»

(Брусиллов, Мои воспоминания, стр. 179):

Հարավ-Արևմտյան Փրոնտի մասին նրա նախկին գլխավոր հրամանատար գեներալ Իվանովը տեսակետի համաձայն այն կարծիքն էր տիրապետող դարձել, որ այնտեղ հնարավոր են միայն սրբաշարանողական զործողություններ, իսկ հարձակման մասին խոսք կարող է լինել միմիայն մյուս Փրոնտների հարձակման հաջող արդյունքների առկայութեան սրբամաններում:

Սակայն, տիրող կարծիքին հակառակ, այդպես չէր մտածում այդ Փրոնտի նոր նշանակված գլխավոր հրամանատարը՝ գեներալ Բրուսիլովը, որը գեո ապրիլի 1-ի ուղղման խորհրդակցությունից սուսջ իր տեսակետը շարադրել էր Նիկոլայ II հետևյալ պարզ ու կտրուկ խոսքերով. «...Տես հաստատ համոզված եմ, որ այժմ ինձ հանձնված բանակները, մի բանի ամսի հանդատից և նախապատրաստական աշխատանքից հետո, ամեն տեսակետից հիմնալի գրութեան մեջ են, բարձր մարտական ոգով են ստեղծված և մայիսի 1-ի մոտերքը պատրաստ կլինեն հարձակման համար, այդ պատճառով էլ ես սրբելով խնդրում եմ զործողությունները նախաձեռնություն սուլ ինձ, իհարկե, մնացած Փրոնտների հետ համաձայնեցրած կերպով: Իսկ եթե այն կարծիքը, թե Հարավ-Արևմտյան Փրոնտն ի վիճակի չէ հարձակվելու, հաղթանակի և իմ կարծիքը, իբրև այդ զործում գլխավոր պատասխանատու անձի, չը հարգվի, այն ժամանակ այդպիսի գեղարում իմ մնալը գլխավոր հրամանատարի պոստում ո՛չ միայն անօգուտ, այլև վնասակար է և այդ գեղարում, խնդրում եմ, ինձ հեռացնե՞ր» (Брусиллов, Мои воспоминания, стр. 176):

Այսպիսի խոր հավատ ունեւր ուս գիմարի մարտական ոգու և ուժի մասին նրան ըստ արժանիության գնահատող և ճանաչող նշանավոր սուս գորավարը՝ Բրուսիլովը, որը գլխուք ո՛չ միայն ճիշտ ըմբռնել ուղղման իրադրությունը, այլև բավականաչափ քաղաքական հոտատություն ունեւր հասկանալու գերմանական իմպերիալիզմի գիշատիչ նպատակները մատնախորսպես սուս ժողովրդի և նրա բայածապիսը հայրենիքի նկատմամբ սուսջին իմպերիալիստական պատերազմի շրջանում:

Ծանոթանանք նրա հետաքրքրական մտքերին հենց իր բառերով: Նշելով այն հանգամանքը, որ հատկապես Վիլհելմը II կայսրության ժամանակից սկսվում է «Գերմանիայի ռազմական (ցամաքային և ծովային) ուժերի համառ սլանաչափ զարգացումը», երբ Փրանս-սլոնավան 1870—1871 թ. թ. պատերազմի հաղթանակով հարբած՝ Գերմանիան սկսում է մեծ պատերազմի պատրաստվելով, «համաշխարհային հեղեմոնիայի ձգտելը», — Բրուսիլովը շարունակում է. «Ընդամեն զերմանական ժողովրդի բոլոր շերտերի բարոյական նախապատրաստումը այդ մեծ պատերազմի համար ո՛չ միայն մոռացված չէր, այլև սուղին սլանի վրա էր քաշված և ժողովրդին նույնքան համառուն, ինչքան որ հաջող կերպով բոլոր միջոցներով ներշնչում էին, որ Գերմանիան պետք է արևի տակ իր համար արժանի տեղ դրա՛յի, այլապես նա կհչու՛ծվի և կկործանվի, որ զերմանական մեծ ժողովուրդը, իր զերմանական բարի աստուծո՛ւ օգնությամբ, իբրև ընտրյալ ցեղ, պետք է ջարդի Ֆրանսիային ու Անգլիային, իսկ սլալոնները ստորին ցեղին Ռուսաստանի դիտարկութեամբ պետք է պարարտանյութ դարձնի զերմանական բարձր առասյի զարգացման ու վեհութեան համար» (Брусилов, Мои воспоминания, 2-е изд., стр. 64):

Այսպես պարզ ու ճիշտ պատկերացնելով զերմանիայից ռուսական երկրին ու ժողովրդին սպանացող մեծ մտանդը, Բրուսիլովը միաժամանակ խորապես համոզված էր, որ համաշխարհային հեղեմոնիայի ձգտող «բարձր ուսասյի» զերմանական խմբերախմբերին «սլալոնական ստորին ցեղին» պատկանող ուսասյի դիմադրը և զորախորը «տեխնիկական ու բարոյական նախապատրաստման» անբարեհաջող պայմաններում սնված ընդունակ են հարվածելու, ուստի նա, Կուրոպատկինի և էվերտի գծին հակառակ, մճուղանապես սրաշտարանից հարձակման սնցնելու տեսակետը:

Բրուսիլովը հետևյալ ձևով էր հիմնավորում իր միտքը. «... Անկասկած, ցանկալի է ունենալ մեծ քանակությամբ ծանր հրետանի և արկեր, անհրաժեշտ է նույնպես օդային ապարատները քանակը շատացնել՝ հնացածները և մաշվածները փոխելով: Բայց մեր բանակի գործերի ներկա դրութեան ժամանակ էլ ես հաստատ համոզված եմ, որ մենք կարող ենք հարձակվել: Չեմ խոսում մյուս Փրոնաների մասին, որովհետև ծանոթ չեմ այդ Փրոնաների գործերին, բայց Հարախ-Արևմտյան

Ֆրոնտը, իմ համոզմունքով, ո՛չ միայն կարող է, այլև պետք է հարձակվի, և ես ենթադրում եմ, որ մենք հաջողութեան բոլոր շանսերն ունենք, որի մեջ ես անձամբ համոզված եմ»:

Այս Բրուսիլովը պարզաբանում է սուսական Ֆրոնտի հարձակումները անհաջողութեան գլխավոր պատճառը և հիմնախորում է հարձակման իր նոր պլանը, որի իրագործման ղեկըում նա հաջողութունն ապահովված է համարում. «Են կարծում եմ, մեր մինչև այժմ ունեցած թերութիւնն այն է, որ մենք մի անդամից բոլոր Ֆրոնտներով չենք հարձակվում թշնամու միջոց, որպեսզի ներքին օպերացիոն դժեքով դործողութիւններ կատարելու առտնկութիւններից օգտվելու հնարաւորութիւնը մերացնենք հակառակորդի համար. այդ պատճառով էլ, նա, գորքերի քանակով զգալիորեն մեզնից ավելի թույլ լինելով, օգտվում է իր երկաթուղիների դարգացած ցանցով և ըստ ցանկութեան իր զորքերն այս կամ այն տեղն է փոխադրում: Հետեւիանքը միշտ այն է լինում, որ զրոհի ենթակա տեղամասում նա նշանակված ժամանակին շարունակ ավելի ուժեղ է լինում մեզնից թե տեխնիկական և թե քանակական տեսակետից: Այս պատճառով, պնդելով թուլլութիւնն եմ խնդրում իմ Ֆրոնտում էլ հարձակողարար դործելու իմ հարեանների հետ միաժամանակ. եթե, սպասածին հակառակ, ես նույնիսկ ո՛չ մի հաջողութիւն չունեցա էլ, ապա անախազն ո՛չ միայն հակառակորդի զորքերը կկասկեցնեմ, այլև նրա ղեկերիները մի մասը ղեկի ինձ կզրախեմ և այդպիսով ուժեղ չափով կհեշտացնեմ էվերսի և Կուրոպասկինի խնդիրը» (Брусиллов, Мои воспоминания, стр. 17, կամ Наступление Юго-Западного фронта, стр. 80—81):

Ռազմական խորհրդի անդամները որևէ էական առարկութիւն չեն անում Բրուսիլովի այդ պարզ ու մշտական պլանին, բայց այնուամենայնիվ ղեկադույն գլխավոր հրամանատարի շտաբի պետը հարկ է համարում նրան նախազգուշացնել, որ Հարավ-Արևմտյան Ֆրոնտը հարձակումն իրագործելիս լրացուցիչ կերպով ո՛չ զորք, ո՛չ էլ սազմական այլ հանդերձանք կըստանա և պետք է բավականանա իր համար արդեն նսխասուներված բաժնով, որովհետև շտաբի պետի արամազրութեան տակ եղած ղեկերիները և ծանր հրետանին ու արկերը հասկացվելու են Արևմտյան և Հյուսիսային Ֆրոնտներին, իրեն գլխավոր հարված հասցնողների:

Բրուսիլովի հետևյալ պատասխանից հետո՝ հարցը համար-
վում է սորոխած. «...Ես ոչինչ չեմ իմացում, ո՛չ մի հատուկ
հայթանակ չեմ խոստանում, կրավականանամ նրանով, ինչ որ
ունեմ, բայց Հարավ-Արևմտյան Ֆրոնտի զորքերն ինձ հետ
միասին կխնայեն, որ մենք աշխատում ենք ընդհանուր շահի
համար և հեշտացնում ենք մեր մարտական ընկերները՝ գործը,
նրանց հնարավորություն տալով խորտակել թշնամուն» (Бру-
силов, Мои воспоминания, стр. 179, կամ Наступление Юго-
Западного фронта..., стр. 80—81):

Բրուսիլովի այսպիսի վճռական ու անհողողղբ դիրքը որոշ
չափով փոխեց նաև Կուրսարևակներ և Էլեկրաի ընդուն, որոնք
ինչպես հաղորդում է նա, հայտարարեցին, թե իրենց Ֆրոնտե-
րում հարձակում հնարավոր է, բայց անկարելի է երաշխավորել
հաջող արդյունքի համար:

Ապրիլի 1-ի ռազմական խորհրդակցությունը վերջացրեց
իր աշխատանքը՝ որոշում ընդունելով, որ ռուսական երեք
ֆրոնտն էլ հարձակման համար անհրաժեշտ նախադատարանու-
թյունները պետք է ավարտեն մայիսի կեսին (հին տոմարով):

Հյուսիսային և Արևմտյան Ֆրոնտները գլխավոր հրամա-
նատարների հետագա դիրքը, փաստապես նրանց դերիև դավա-
ճանական դերը մայիս-հունիսի հարձակման ամբողջ ընթացքում
ձիշտ հասկանալու համար խիստ բնորոշ է այն փաստը, որ հա-
ղորդում է Բրուսիլովը ռազմական խորհրդակցությանը մաս-
նակցող ավագ ղեկավարներից մեկի մասին: Այդ «ավագ ղեկե-
րալը» այսպիսի «բարեկամական» խորհուրդ է տալիս Բրուսի-
լովին. «Դուք հենց նոր եք գլխավոր հրամանատար նշանակված
և ձեզ ընդամեն երջանկություն է փիճակվել հարձակման ջանք-
ներու, հետևաբար փստնգի չենթարկելու ձեր մարտական համ-
բալը, որն այժմ բարձր է: Ինչո՞ւ եք ենթարկում ձեզ խոշոր
անախորժությունների, գուցե և պաշտնից հեռացվելու, նաև
այն ռազմական օրենիլը կորցնելու փստնգին, որին ձեզ հաջող-
վել է մինչև այժմ արժանանալ: Եթե ես լինեի ձեր տեղը, ամ-
բողջ ուժով կաշխատեի ամեն տեսակ հարձակողական գործո-
ղություններից փրկվել, որոնք գործի ներկա դրության պայ-
մաններում միայն կարող են ջարդել ձեր վիլը, իսկ անձնական
օգուտ չեն բերի ձեզ»: Բրուսիլովի պատճառարանությունը, թե
ինքը հետամուտ է իր ուժերի չափ գործել միայն «Ռուսաստանի
օգտին և ուրիշ ոչինչ», անհասկանալի է մտած «ավագ ղեկե-

բալլին», որը թոթիվում է ուսերը, կարեկցությամբ նայում էր «խորհուրդը» չըմբռնող խոսակցին և հեռանում (Брусилов, Мои воспоминания, стр. 180):

Կարելի է չկասկածել, որ այսպես էին դատարկ ցարական ոչ սահալաթիվ ախազ ու կրտսեր զիներարներ, և դրանք էին որ պիտի նախադատարատեին և իրազորեին իրենց Արևմտյան դաշնակիցներին՝ Անգլիայի և Ֆրանսիայի հետ ծրագրված ընդհանուր հարձակումը ալտարո-դերմանական բանակների վրա:

Արեքսեկը ապրիլի 11-ին (24-ին) այդ հարձակման մասին հրահանգ ուղարկեց երեք Փրոնտի գլխավոր հրամանատարներին՝ այսպես ձևակերպելով ապրիլի 1-ի ռազմական խորհրդակցության որոշումները.—

«1. Մեր բանակների առաջին գործողությունները ընդհանուր նպատակն է հարձակման սնցնել և գրոհել գերմանական ալտարիական զորքերի վրա:

2. Գլխավոր հարվածը հասցնելու են Արևմտյան Փրոնտի բանակները. Հյուսիսային և Հարավ-Արևմտյան Փրոնտները բանակներն ավազություն են ցույց տալիս, պատշաճ եռանդով և հատուտակամությամբ հարվածներ հասցնելով, ինչպես թշնամու դատափորություն մեջ մասնակի ճեղքումներ կատարելու, այնպես էլ իրանց առաջ գանդող հակառակորդի ուժերը պարտություն մատնելու համար»:

Այս հրահանգում նշվում է, որ Արևմտյան Փրոնտը հակառակորդին գլխավոր հարվածը հասցնելու է Վիլնի ուղղությամբ, մասնանշվում է նաև Հյուսիսային Փրոնտի հատվածի ուղղությունը, որից հետո ասված է. «Հարավ-Արևմտյան Փրոնտը իր ամբողջ դատափորություն ռալոնում հակառակորդին տաղնապի ենթարկելով, գլխավոր գրոհ է դիմում Ց-րդ բանակի զորքերով Լուցկի ընդհանուր ուղղությամբ» (Наступление Юго-Западного фронта..., стр. 81):

Ռուսական գլխավոր շտաբի պետի այդ հրահանգը, որի գլխավոր կետերը բերեցինք վերևում, այսպիսի վնասատու թյուն է ստանում զնդապես Վեստչնիկովի կողմից, որի շատ անգամ նշված աշխատությունը Բրուսիլովյան ճեղքումի մասին առայժմ միակ ուսումնասիրությունն է այդ հարցի նկատմամբ ռազմական-մասնագիտական տեսանկյունով: Թեև հրահանգում խոշոր օպերացիա էր նշված, գրում է Վեստչնիկովը, բայց դրա մեջ սրահատում էր մի հիմնական բան. «Գլխավոր

23227

823

A II 38941



հրամանատարութեան օպերացիայի խղճան արտացոլող կոնկրետ խնդիրներ Փրոնտները չստացան, և մեկը մյուսից մեկուսացած Փրոնտային հարվածները բացառում էին դրանց փոխադարձ գործակցութեանը» (Վ. В. Ветошников, Брусиловский прорыв, стр. 25):

Մենք կատենենք, որ եթե հրահանգում պակասում էր երեք Փրոնտի սերտ գործակցութեան խղճան, ապա լրակատարութեան մեջ, հարձակումը կենսադարձելիս այդ գործակցութեանը երեք Փրոնտի բանակների գլխավոր հրամանատարների միջև, նրանց գործի միջև լիովին բացակայում էր:



Ապրիլի 1-ի (14-ի) ռազմական խորհրդակցութեանից հետո՝ գեներալ Բրուսիլովն ապրիլի 5-ին (18-ին) իր մոտ է հրավիրում իր Փրոնտի բանակների հրամանատարներին և նրանց շտաբների սեփական և մանրամասն ծանոթացնում է Հարավ-Արևմտյան Փրոնտի խնդիրների և անելիքների հետ: Ներկա էին՝ 8-րդ բանակի հրամանատար գեներալ Կալեդինը, 11-րդ բանակի հրամանատար Սախարովը, 7-րդ բանակի հրամանատար Շչեքերաշովը և 9-րդ բանակի ժամանակավոր հրամանատար Կրիմովը (հիվանդ Լեչիցկու փոխարեն):

Համառոտ ծանոթանանք խորհրդակցութեան հարցերին, օգտվելով հենց այն տեղեկութեաններէից, որ այդ մասին հարցրած է Բրուսիլովն իր «Հիշողութեաններում»:

«Ես չարադրեցի նրանց գործի դրութեանը և իմ որոշումը՝ անպայման մայիս ամսին հարձակման անցնելը»: Երբ գեներալներէից մեկը փորձում է սուսրիկել տվյալ պայմաններում հարձակման հնարավորութեան դեմ՝ հետևում է այսպիսի պատասխան. «Ես բանակների հրամանատարներին հավաքել եմ ո՛չ թե նրա համար, որ մճուկեք Փրոնտի բանակների ակտիվ կամ պասսիվ գործողութեանները եղանակի հարցը, այլ նրա համար, որ անձամբ հրաման տամ հակառակորդի վրա գրոհելու նախապատրաստման մասին, զբոհ, որի վերաբերյալ ես անդարձ որոշում ընդունել եմ: Հետևաբար, անհրաժեշտ է տվյալ դեպքում քննել այն հարցը, թե առաջիկա հարձակման ժամանակ ի՞նչ դեր է բաժին ընկնում բանակներից ամեն մեկին և խստորեն համաձայնեցնել նրանց գործողութեանները»:

Թշնամու մյաս գրոհելու այն կարգը, որ այդ խորհրդակցության մեջ շարադրեց Բրուսիլովյալը, «բախտական խոշոր չափով տարածատում էր այն կարգին, որը, գերմանացիներէ օրինակով, պատերազմի այդ մոմենտում լացառապէս պետքական էր համարվում պողիցիոն (դէրքային) պատերազմում հակառակորդի Ֆրոնտը ճեղքելու համար»:

Գերմանացիք ճակատային գրոհը հաջողութեամբ ավարտելու համար մշակել էին իրենց հատուկ եղանակը: Այն կետում, նկատում է այդ առթիւ Բրուսիլովյալը, որտեղ ենթադրվում էր ճեղքել հակառակորդի Ֆրոնտը, կենտրոնացվում էին հրետանու հակադասում խմբեր և խոշոր հեռակալային ռեզերվներ: Ապա սկսվում էր գրոհի նախապատրաստումը ուժգին հրետանային կրակով, որով քանդվում էին լարավազողները և ոչնչացվում էին թշնամու ամբողջունները և կենդանի ուժը: Այդպիսի պայմաններում հեռակալի գրոհը հրետանային կրակի պաշտպանութան տակ մերձանում էր հաջողութեամբ, ճեղքվում էր Ֆրոնտը և հետզհետե ընդարձակվում էր այն, հակառակորդն ստիպված էր լինում հեռանալ և այն կետերից, որոնք գրոհի էին ենթարկվել:

Հենց գրոհի այդ եղանակը կիրառելով է, որ 1915 թ. ընթացքում գերմանացիք մեծ հաջողութուններ ունեցան ուսսական Ֆրոնտում: Իսպ. այդ հաջողութունները հասկանալու համար՝ իրախամը նշում է Բրուսիլովյալը, պետք է նկատի ունենալ նաև այն, որ «...1915 թ. մեր ամրացած շերտերի կառուցվածքն ամեն քննադատութունից ցած էր, մենք հակադրեցութեան ո՛չ մի նպատակահարմար միջոցի չէինք գիտնում, ծանր հրետանի համարյա բոլորովին չունեինք և, մերձապէս, ամենադիտարկութեամբ— մենք ընդհանրապէս ո՛չ մի հրազենի պաշար չունեինք: Իսկ այն գեպերում, երբ հակադրեցութեան համապատասխան միջոցներ ձեռնարկվում էին, մերևում նշված եղանակով Ֆրոնտի ճեղքումը հաջողութուն չէր ունենում»:

Գրոհի այդ եղանակի հիմնական բացն այն է, որ օդային հետախուզութեան զոյւթյան պայմաններում դրա նախապատրաստութեանը անկարելի է գաղտնի պահել: Հրետանու բոլոր տեսակների, հրազենի պաշարների բերելը և տեղափոխելը, մյուս ուղղական պատրաստութունները, սլացղարմի կառուցումը, որը հնարավորութուն է ստեղծում առաջավոր խրամատները մոտեցնել հակառակորդի խրամատներին 200—300

բայցի վրա, — կարելի է վերջացնել ո՛չ շուտ, քան 6—8 շաբաթում: Այդ ժամանակամիջոցում հակառակորդը կարող է ճշտությամբ որոշել գրոհի կետը և համարպատասխան միջոցներ ձեռք առնելով, կանխել Փրոնտի ձեղքման վտանգը:

Գրոհի գերմանական այդ եղանակի մասին վերևում շարադրված եղրակացությանը հանգել էր միայն Բրուսիլովը, իսկ Հյուսիսային և Արևմտյան Փրոնտների գլխավոր հրամանատարները հենց այդ եղանակով էլ շարունակում էին ղեկավարվել և իրենց հարձակման նախապատրաստությունները այդ ոգով էլ կատարում էին, ամեն մի Փրոնտի համար հարվածի մեկ կետ ընտրած ունենալով:

Իսկ թե Բրուսիլովը Հարավ-Արևմտյան Փրոնտում գրոհի ինչ նոր եղանակ էր ծրագրում կիրառել, գերմանական եղանակի նշված հիմնական թերությունից խուսափելու համար, պատմենք իր խոսքերով:—

«... Ես հրամայեցի, որ ինձ հանձնված Փրոնտի ո՛չ թե մեկ, այլ բոլոր բանակներում նախապատրաստեն մեկական հարվածային տեղամաս, իսկ բացի դրանից որոշ կորպուսներում ամեն մեկը ընտրի իր համար հարվածային տեղամաս և այդ բոլոր տեղամասերում անհարպազ սկսեն հողային աշխատանքները՝ հակառակորդին մոտենալու համար: Սրա շնորհիվ ինձ հանձնված Փրոնտում հակառակորդն աղպխի հողային աշխատանքներ կտեսնի 20—30 տեղում, և նույնիսկ փախստակները (перепежчики) ի վիճակի չեն լինի հակառակորդին այլ բան հաղորդելու, քան այն, որ սոյցալ տեղամասում գրոհ է նախապատրաստվում: Այսպիսով, հակառակորդը հնարավորությունից զրկվում է մեկտեղ հավաքելու իր բոլոր ուժերը և չի կարող խմանալ, թե որտե՛ղ է հասցվելու նրան գլխավոր հարվածը: Ես մտնել էի գլխավոր հարվածը հասցնել Տրդ բանակի միջոցով Լուցի քաղաքի ուղղությամբ, որտեղ էլ ուղարկում էի գլխավոր ռեզերվները և հրետանին, բայց մնացած բանակներն էլ պետք է ամեն մեկը թեկուզ և երկրորդական, բայց ուժեղ հարվածներ հասցնեին, և վերջապես ամեն մի կորպուս իր մարտական տեղամասի որևէ կետում կենտրոնացնում էր իր հրետանու և ռեզերվների ըստ հնարավորին մեծ մասը, որպեսզի ամենաուժեղ կերպով իր վրա մեխեր իր դեմ կանգնած գործերի ուղադրությունը և նրանց ամբայնևր Փրոնտի իր տեղամասին»:

Բրուսիլովյան ճեղքումը իր այս նոր եղանակն անխոցելի չէր համարում, այլ նշում էր, որ սա էլ իր հակառակ կողմը, իր թեթու թյունն ունի, որ սրա կիրառման ժամանակ անկարելի է գլխավոր հարվածի կետում այնքան զորք ու հրետանի կենտրոնացնել, ինչքան այլ հնարավոր է միայն մեկ հարվածային գլուխքս ունենալու դեպքում: Բայց քանի որ Հարավ-Արևելալայն Ֆրոնտի առաջ խնդիր էր դրված թշնամուն հարվածել և նրա ուժերը կաշկանդել այն նպատակով, որ Արևմտյան Ֆրոնտը հնարավորություն ստանա իր գլխավոր հարվածը հանդուրժյամբ հասցնելու, այդ պատճառով Բրուսիլովյան ճեղքում էր, որ «հարկավոր է ընտրել զործողությունների այն պլանը, որը տվյալ դեպքի համար ամենից ավելի օգտակար է, այլ ո՛չ թե կուրորին հետևել դերմանացիներին»:

Բրուսիլովյան հաջողվում է խորհրդակցության ընթացքում ցրել իր բանակների հրամանատարներին որոշ ստրատեյաները, հանդուստցնել նրանց և հավատ ներշնչել դեպի իր նոր պլանի նըպատակահարմարությունը և հաջող արդյունքները: Ռազմական նախապարտատու թյունները ավարտելու համար վերջնական ժամկետ է նշանակվում մայիսի 10-ը (23-ը), ապա խորհրդակցությունը վավերույց առաջ՝ Բրուսիլովյան հայտարարում է, որ «մայիսի 10-ից սկսած, ըստ իմ հեռազրային ծանուցման, մի շարքի անց հարկավոր է բոլորովին պատրաստ լինել մճառկանորեն հարձակման անցնելու համար: Ո՛չ մի պատրվակ և իճնդիր ժամկետը երկարացնելու մասին ես ո՛չ մի դեպքում չեմ ընդունելու և խնդրում եմ այս հաստատ հիշել» (А. А. Брусиллов, Мои воспоминания, 2-ое изд., стр. 180—184, կամ Наступление Юго-Западного фронта..., стр. 111—114):

Նույն խորհրդակցության մեջ Բրուսիլովյան ընդհանուր ցուցումներ է տալիս իր բանակների գլխավոր հրամանատարներին յուրաքանչյուր բանակի առաջիկա զործողությունների պլանը կազմելու մասին, նշելով, որ «պլանը պետք է մանրամասն մըշակվի բանակի շտաբում և նախօրոք հաղորդվի անմիջական իրազործողներին ո՛չ միայն տեղեկացման համար, այլև այն բանի համար, որ նրանք իրանց համապատասխան եղբայրացությունները ներկայացնեն, որ կարող են օգտակար լինել և այդ պլանի համար ուղղումներ հանդիսանալ (Наступление Юго-Западного фронта..., стр. 114—115):

Այսպիսով, ամեն մի բանակի զործողության պլանի պատ-

բաստման նախաձեռնութիւնը հանձնուեալ է նրա հրամանատարութեանը, բայց Բրուսիլովը սպարբարարը ղեկավարուած էր ընդհանուր գործը և հիմնական ցուցումներ տալիս: Այսպէս, օրինակ, սարիլի Գ-ին նա բանակների գլխավոր հրամանատարներին գրուհը կազմակերպելու մասին գրուած էր. «Գրուհը պետք է կատարվի ըստ հնարավորին բանակի ամբողջ Փրոնտում... Միայն բոլոր ուժերով կատարվող համառ գրուհը, ըստ հնարավորին ազելի բայց Փրոնտով, ընդունակ է իրոք կաշկանդել հակառակորդին, նրան հնարավորութիւն չտալ իր սեղերակները արագ տեղափոխելը» (Наступление Юго-Западного фронта... стр. 118):

Իսկ սարիլի Դ-ի հրահանգում անդրադասուելով նույն հարցին, Բրուսիլովն ալելի է կոնկրետացնում իր հրամանը, նշելով, որ «գրուհը կատարվելու է ամբողջ Փրոնտում»՝ Ստիբ գետից մինչև Պրուտ գետը», ապա ալելացնում է. «Առաջիկա գործողութիւնների ամենամերձավոր նպատակը լինելու է ջարդել հակառակորդի կենդանի ուժը և տիրել նրա աշտ՝ գրաված գիւրքերին» (Նալյն տեղում, էջ 122):

Ահա այսպիսի նորատակադրումով ամբողջ Հարավ-Արեւմտյան Փրոնտում սկսուեալ է մի լարված ու տենդային աշխատանք առաջիկա հարձակումը նախապատրաստելու համար:

Անհրաժեշտ էր ամենեւեց առաջ ճշգրիտ տեղեկութիւններ հաւաքել հակառակորդի ամրացրած գիւրքերի և գորգի թվի ու դասավորութեան մասին: Հետախուզութեան բոլոր միջոցներն օգտագործելով՝ հաջողուեալ է սլարգել, թե այստար-գերմանական ո՛ր զորամասերն են տեղավորված Բրուսիլովի բանակներին դեմ, ապա իմանալ, որ գերմանացիներն իրենց գորգից մի քանի ղեկիղիա փոխադրել են Փրանսիական Փրոնտ, իսկ ամբարիսդիք-խտաբական Փրոնտ: Այդ հնարավոր էր համարվել այն պատճառով, որ հակառակորդն այս Փրոնտում ամենևին հարձակում չէր սպասում, բացի գրանից նա ձեռնալ և զարնան ամխներին օգտագործել էր երկարատե հանդիսար, խոշոր սաղմական գործողութիւնների դադարումը և շատ լավ ամրացրել էր իր գիւրքերը:

Հալաբաժ տեղեկութիւնների համաձայն՝ ալատրո-գերմանական գիւրքերը Հարավ-Արեւմտյան ամբողջ Փրոնտի երկարութեամբ կազմված էին ո՛չ սլակաս քան երեք ամրացված շեր-

տից, որոնք իրարից հեռու էին մոտավորապես 3-ից մինչև 5 վերստ: Ամեն մի շերտն էլ իր հերթին կազմված էր մի քանի շարք խոր խրամատներից, որոնց միջև սարածուխյունը 150—300 քաշ էր: Ապա կառուցված էին մեծ քանակությամբ բլինդաժներ, և այլ ամրություններ, ազատաբաններ, որ շատ ամուր ու հարմարավոր էին, հրամանատարական կազմի համար նույնիսկ կահավորված էին կոմֆորտով: Դիրքերի ամեն մի ամբարցրած շերտը պաշտպանված էր փշալարերի շատ հիմնական ցանցով, առաջին շերտի փշալարերի ցանցը կազմված էր 19—21 շարք ցցերից:

Բրուսիլովը խոսերով ամստրո-գերմանական դիրքերի ուղղմական-տեխնիկական սարքավորման մասին, հանդուժ է այսպիսի եզրակացություն. «Ընդհանրապես ամստրո-գերմանական այդ աշխատանքը ամրությունների ստեղծման դործում ավելցուցելի կերպով հիմնական էր և կատարված էր դորքերի անընդհատ աշխատանքով ավելի քան 9 ամաի ընթացքում» (Брусиллов, Мои воспоминания, стр. 187—188):

Նույն խնդրի մասին Հարավ-Արևմտյան Փրոնտի բանակների ինժեներական մասի պետ գեներալ Վերլեկոն նկատում է. «Հասկանալիորով իր դիրքերի ամրացման համար բախականաչափ ժամանակ ունեւր, նա դործի մեջ էր դրախել լուսազույն ինժեներական ուժեր, օգտագործել հարուստ տեխնիկական միջոցներ և շատ փող ծախսել»: Ապա նա նշում է, թե անհրաժեշտ է որոշ եզրակացություններ անել այդ բոլորից այն մասին, թե «ինչպես է հարկավոր մարտի արդի պայմաններում ամրացնել մեր դիրքերը» (Наступление Юго-Западного фронта..., стр. 101):

Նույն կարծիքին է այդ մասին նաև Հարավ-Արևմտյան Փրոնտի նշանավոր դրոհի նորագույն ուսումնասիրողը, գնդապետ Վեստշնիկովը, որը գրում է. «1915—1916 թ. թ. ձմեռվա և գարնան հարաբերական հանդարտություն տեսական չըջանը հակառակորդին հնարավորություն տվեց օգտագործել իր լավագույն ինժեներական ուժերը, հարուստ տեխնիկական միջոցները և բախական ուժեղ ամրացրած դիրք ստեղծել» Ա. В. Веттошников, Брусилловский прорыв, стр. 30):

Բրուսիլովյան դրոհին նախրված արխիվային գրությունների վերջերս հրատարակված ժողովածվում նշվում է ամստրո-գերմանական դիրքերի մի այլ առաջիկություն ևս, այն է՝

«...Հիանալի սարքախորումը սանհրտարական և կենցաղային տեսակետից» (Наступление Юго-Западного фронта, стр. 16):

Եթե նկատի ունենանք և այն, որ «...ուսական ղերքերը զգալի չափով զիջում էին ախտորոշական ամբուլթյուններին ինչպես ուժի, այնպես էլ կենցաղային պայմանների տեսակետից» (Л. В. Ветошников, Брусилловский прорыв, стр. 35), այն ժամադակ հասկանալի կլինի, թե ինչո՞ւ շատերին անհավատալի էր ախտորոշումներն անհայտ ղերքերի ճեղքումը: «Բայց ես հավատացած էի, որ այնուամենայնիվ հնարախորթյուն կա լիովին հաջող կերպով Փրոնտի ճեղքման խնդիրն իրագործել նաև այլպիսի ծանր պայմաններում», — ասում է Բրուսիլովը:

Հնարախորթյան առաջին պայմանը հարվածի անակնկալ լինելն էր թճնամու համար, քանի որ ըստ Բրուսիլովի նոր պլանի գրոհը լինելու էր Փրոնտի բազմաթիվ կետերից, իսկ Երկրորդ պայմանն այն էր, որ հակառակորդի ուժերը թուլացած էին, նրա զորքի մե մասն այլ Փրոնտներ էր փոխադրված: Վերջին հանգամանքի կարևորութունը չէտեսլով, Բրուսիլովը նկատում է, թե ինքնին հասկանալի է, որ «ամբուլթյուններն ինչքան էլ որ ուժեղ լինեն, առանց պատշաճ կենդանի ուժի չեն կարող հեռ մղել գրոհը» (Брусиллов, Мои воспоминания, стр. 188—189):

Իսկ կենդանի ուժի փոխհարարբութունը գրոհն սկսելու մոմենտում, այսինքն մայիսի 22-ին (հունիսի 4-ին) այսպես էր.—

8-րդ բանակի ուժերն էին—	224944
նրա դեմ կանգնած հակառակորդինը—	147300
11-րդ բանակի ուժերն էին—	130621
նրա դեմ կանգնած հակառակորդինը—	132600
7-րդ բանակի ուժերն էին—	113354
նրա դեմ կանգնած հակառակորդինը—	84540
9-րդ բանակի ուժերն էին—	164424
նրա դեմ կանգնած հակառակորդինը—	111000
Զորս բանակի ուժերն էին ընդամենը—	633343
հակառակորդի ուժերն էին ընդամենը—	475440

(Л. В. Ветошников, Брусилловский прорыв, стр. 56, կամ Наступление Юго-Западного фронта..., стр. 19): Ախտորոշող-արմ

նախան ուժերը մոտավորապես նույն չափ են հաշվում նաև Բրուսիլովյան ու Հարավ-Արևմտյան Փրոնտի բանակների զենեկաբանական հաստիքը: Առաջինի հաշվով հակառակորդն ունի 450000 սվին և 30000 թուր (Брусиллов, Мои воспоминания, стр. 187), իսկ երկրորդի հաշվով — 450000 սվին և 31000 թուր: Վերջինիս սվյալների համաձայն ուստական չորս բանակի թվական կազմը, առանց 126-րդ հետևակային և 3-րդ Կովկասյան կադակային դիվիզիաների, հետևյալն էր — 13593 սար, 526995 սվին և 60036 թուր, կամ ընդամենը — 600624 (Наступление Юго-Западного фронта..., стр. 197 и 199):

Այսպիսով, Հարավ-Արևմտյան Փրոնտում ուստական բանակներն ընդհանուր առմամբ որոշ թվական գերակշռություն ունեն սպասարդ-գերմանական ուժերի նկատմամբ, հատկապես նկատելի էր 8-րդ բանակի ուժերի գերազանցությունը, որը բընում էր Փրոնտի աջ թևը և պետք է գլխավոր հարվածը հասցնեի հակառակորդին Լուցկի ուղղությամբ, և 9-րդ բանակինը, որը բնում էր Փրոնտի ձախ թևը՝ Ռուսիայի սահմանի մոտ, և որի հաջողությունը պետք է մղեր այդ երկրին Անտանտի կողմը:

Սակայն այստորդ-գերմանական զորքը տեխնիկապես անհամեմատ ավելի նրաստավոր դրուժյան մեջ էր, քան ուստականը: Բրուսիլովյան այդ մտախն առում է. «Հակառակորդի ստավելությունը մեր հանդեպ այն էր, որ նրա հրետանին ավելի բազմաթիվ էր մերից, հատկապես մեր ծանր հրետանուց, բայց դրանից, նա գնդացիներ անհամեմատ ավելի շատ ուներ, քան մենք» (Брусиллов, Мои воспоминания, стр. 1):

Բրուսիլովի պնդումը հաստատող թվական սվյալները, մասնավորապես ծանր հրետանու նկատմամբ, հետևյալն են.

8-րդ բանակն ունի թեթևի հրետանի —	640,	ծանր հրետանի —	76
Հակառակորդն » » » —	375,	» » —	174
11-րդ բանակն » » » —	360,	» » —	22
Հակառակորդն » » » —	312,	» » —	159
7-րդ բանակն » » » —	322,	» » —	23
Հակառակորդն » » » —	264,	» » —	62
9-րդ բանակն » » » —	448,	» » —	47
Հակառակորդն » » » —	350,	« » —	150

Չորս բանակն ընդամենը ունեին՝ թեթև հրետանի— 1770, ծանր հրետանի— 168:

Հակառակորդն ընդամենն ունեւր՝ թեթև հրետանի— 1301, ծանր հրետանի— 545 (Ա. В. Ветошников, Брусилловский прорыв, стр. 65, կամ Наступление Юго-Западного фронта..., стр. 19):

Ավստրո-գերմանական բանակի ղեկավարները թվի մասին լրիվ տեղեկություններ չկան, ուստի անկարելի է որևէ համեմատություն անել:

Այդ աննպաստ հանգամանքները հաղթահարելու համար՝ բրուսիլովը մեծ աշխատանք ծախսեց: Ամեն ջանք թափվեց Ֆրոնտի բոլոր բանակների դիրքերն ըստ հնարավորին կարգավորելու և ամրացնելու համար: Թեև չհաջողվեց սուսական դիրքերը ավստրո-գերմանականի ռազմական-տեխնիկական մակարդակին հասցնել, «բայց այնուամենայնիվ սուսական բանակը իր Ֆրոնտում մի շարք ամրացրած դիրքեր ունեւր, որոնք հակառակորդի հարձակման ժամանակ ընդունակ էին համար դիմադրություն ցույց տալու», — վկայում է հարցն ուսումնասիրող ռազմական մասնագետը (Ա. В. Ветошников, Брусилловский прорыв, стр. 35):

Մեծ խնամքով ու եռանդով կատարվեցին նաև գրոհի իրադրման հետ կապված մի շարք այլ ռազմական պատրաստություններ, որոնց առթիվ բազմաթիվ հրահանգներ արվեցին բանակների հրամանատարներին, կազմակերպվեցին շատ ստուգումներ: Այսպես, օրինակ, բազմաթիվ հետախուզությունները (այդ թվում նաև օդային հետախուզության) հիման վրա կազմվեց ավստրո-գերմանական դիրքերի ամենամանրամասն սխեման (1 դմ = 250 սամետր մասշտաբով) և բաժանվեց բոլոր հրամանատարներին ներառյալ վաշտապետները: Հրետանու դասավորման և դործողության, նրա և հետևակի կազմի հարցերը ո՛չ միայն խիստ մանրամասնորեն և խնամքով մշակվեցին, այլև թիվերաբան, որտեղ կառուցվեցին ավստրիական դիրքերի նման տեղամասեր, կատարվում էր գործի դործնական ուսուցում, տեղի էին ունենում հետևակի և հրետանու միասին ճեղքում կատարելու դործողությունները փորձեր և այլն: Գրոհի ամբողջ նախապատրաստությունը դադանի պահելու համար բոլոր կարևոր կարգադրությունները կատարվում էին հատուկ սպաների միջոցով, նույնիսկ ծածկագրած հեռագրերն էլ նույնպես:

մինչև հարձակման օրը, խիլ թշնամու դիրքերի ճեղքման պլանը հայտնիացած էր միմիայն բանակների գլխավորը հրամանատարներին (Л. В. Ветошников, Брусилловский прорыв, стр. 47—15 և Брусиллов, Мои воспоминания, стр. 189—190):

Նույն նպատակով դորքը տեղափոխված էր թիկունքում և միայն գրոհից մի քանի օր առաջ՝ դիչերով մաս-մաս փոխադրվեց մարտական դիժը:

Հարավ-Արևմտյան Փրոնտի կարիքները գրոհի ընթացքում սպասարկելու համար՝ լավարար հանդուրժյաժք ընթացավ նաև թիկունքի աշխատողներին կազմակերպումը. դրան աջակցի է դարձրեցուցյան է գալիս հարցն արխիվային նյութերի հիման վրա ուսումնասիրող զննարկող վետերինակալը, որը գտնում է, որ սանիտարական գործի դրվածքը, Փրոնտին սպառնալիք էր, պարեն և ֆուրաժ մատակարարելու գործը կարելի է լավարար համարել (Л. В. Ветошников, Брусилловский прорыв, стр. 58—65):

Գրոհի նախադարձատական աշխատանքների մեջ բացառիկ նշանակություն ուներ, իհարկե, Փրոնտի ամեն մի բանակի գործողությունների պլանի մանրամասն մշակումը, երկուս ու նենարդի ամբողջ Փրոնտի ընդհանուր պլանը և ամեն մի բանակի հատուկ խնդիրն աչք պլանը կենսագործելու մեջ:

Արդեն սպրիլի կեսերին բանակների գլխավոր հրամանատարները իրենց պլանները ներկայացրին Բրուսիլովին և հաստատություն. դրանց բննարկման և հաստատման շուրջը բազմաթիվ հարցեր ծագեցին, գրազրույթյուններ և բացատրություններ սկսվեցին Բրուսիլովի և իր բանակների ղեկավարների միջև, որ շարունակվեցին մինչև գրոհի նախօրյակը՝ մայիսի կեսերը:

Բրուսիլովը պլանների մեջ փոփոխություններ և ուղղումներ մտցնում էր, երբեքս ունենալով ամբողջ Փրոնտի գործողությունների հարձակողական ակտիվ բնույթը և հետամտած ընդհանուր նպատակը: Այսպես, օրինակ, Ց-րդ բանակի պլանում Կալեդիեր թեև նշվում էր Լուցիկի ուղղությամբ կատարվելիք գլխավոր հարվածի խնդիրը, լայն ամբողջ ակտիվությունը դրվում էր բանակի կենտրոնի վրա, անդործության մասնակցի բանակի երկու թևը: Բրուսիլովը չի համաձայնում գործողության այդ կզանակի հետ և փոխել է սալիս աչք, հետևյալ ցուցումն անելով. «Հարվածային գրուսպայի երկու թևում»

30-րդ և 32-րդ կորպուսները նույնպես հարձակում են դորժում, իսկ ձեր աջ Փրանզկե ծայրին գործելու է հեծերազորային մասանե: Գտնում եմ, որ այս պահանջներում ո՛չ մի ուրիշ էլ չկա. իսկ եթե ուրիշ կա՛ էլ, է՛հ, առանց ուրիշ անկարելի է գրախ հանել սրատերտոմում: ... Հարձակվելով և գրոհելով՝ հարկավոր է ամեն ինչ բախտախաղի դնել, և առանց հետ նայելու, ի՛նչ գնով էլ որ լինի հաղթության ձգտել: Հե՛տ չնայել, ո՛չ էլ շուրջը, այլ միայն հառա՛ջ: ... Հասել է ժամանակը չարգել թշնամուն և նրան քշել մեր սահմաններից» (Наступление Юго-Западного фронта..., стр. 132):

Բրուսիլովի ցուցումների համաձայն փոխում է նաև 11-րդ բանակի գլխավոր հրամանատար Սախարովի պլանը, որն սկզբում նախատեսում էր երկու ուղղությամբ թույլ միատեսակ հարված: Բրուսիլովի անունից Փրանտի շտաբի պետը հայտնում է Սախարովին, որ անհրաժեշտ է մեկ ուղղությամբ ուժեղ հարված կազմակերպելու գիծ րանել: Թեև դեմ. Սախարովը սկզբում պաշտոնաբան էր պլանը, բայց հետո համաձայնից Բրուսիլովի ցուցումների հետ և ընդունեց մեկ ուղղությամբ հարվածելու ստաջարկը, այն է՝ դեպի Լվով: Այդ առթիվ նա գրում էր Բրուսիլովին. «... Այդ հարվածը իր կողմը կդրավի հակառակորդի ավելի կամ պակաս նշանակալի ուժերը և դրանով կհնչապցնի գլխավոր հարված հասցնող 8-րդ բանակի խնդրի կատարումը» (Наступление Юго-Западного фронта..., стр. 152—153):

Ռումինական սահմանի մոտ գործող 9-րդ բանակի գլխավոր հրամանատար Լեչիցկին ծրագրում էր գլխավոր հարվածն ուղղել հակառակորդի դեմ Դնեստր գետից հարավ, այդպիսով սպառնալիք ստեղծել Չերնովից կարևորագույն երկաթուղային հանգույցի համար, սպառնալիք ստեղծել իր ձախ թևի տևելով գործողություններով Ռումինային կանգնեցնել Ամստամբել հետ միանալու անհրաժեշտության առաջ: Սակայն նա գլխավոր հարվածի համար նկատի ուներ երկու տեղամաս և ծրագրում էր ըստ հնարավորության ընտրել մեկը կամ մյուսը: Բրուսիլովը և իր շտաբի պետ Կրեմովսկին այդ առթիվ պնդում են, որ անսպառնալիք պետք է ընտրել գլխավոր հարվածի մեկ տեղամաս և կոնկրետ մասնանշում են այն: «Չեմ կարող համաձայնվել երկու տեղամասի ընտրության հետ: Պետք է որոշել որևէ մեկը: Մասնանշում եմ Օնուտ-Գորբունովցի տեղամասի վրա իբրև

ամենաօգտավետի», — գրում էր Լեչեցկուն Բրուսիլովը (Наступление Юго-Западного фронта..., стр. 166 и 168):

Զ-րդ բանակի հյուսիսային հարևանի՝ 7-րդ բանակի խընդիրներն համեատ էին, նրա ղլխավոր հրամանատարի՝ գեներալ Շչեբրաշովի պլանի մասին Կլեմբուսկու մի քանի դիտողությունները լսելով, Բրուսիլովը իր համանությունն է տալիս այդ պլանին, սակայն վերջնական հաստատման ներկայացնելուց առաջ՝ խորհուրդ է տալիս մեկ էլ ստուգել իր պլանը, «որպեսզի կարելի լինի դրոշը կենսագործել ամենաօգտավետ պայմաններում, հատկապես ուշադրության առնելով այն միջոցների սահմանափակութունը, որ մենք մեր տրամադրության տակ ունենինք դրա կատարման համար» (Наступление Юго-Западного фронта..., стр. 159, 160 и 162):

Բրուսիլովը Հարավ-Արևմտյան Փրոնտի նախապատրաստությունների ամփոփումներն անելով, այսպես է դժագրում իր ընդհանուր խնդիրները և իր բանակներից ամեն մեկի դերն այդ խնդիրների լուծման մեջ. «... Իմ մտադրություններն այն էին, որ այնքան ուժեղ կերպով կաշկանդեի իմ դեմ կանգնած հակոտարիորդի գործառնելը, որ նա ո՛չ միայն չկարողանար իմ Փրոնտից ոչինչ նետել մյուս Փրոնտները, այլ, ընդհակառակը, ընտելված լիներ սրև է բան ուղարկել նաև իմ Փրոնտը: Այդ ժամանակ ես միայն մտածում էի այն մասին, որ լավագույն ձևով շղթան էլվերտին (Արևմտյան Փրոնտի գլխավոր հրամանատարին:— Վ. Ռ.), որի վրա ամենամեծ հույսեր էին դրվում և որին այդ պատճառով էլ մատակարարեցին Կայանի տրամադրության տակ եղած բոլոր միջոցները: Այս նկատառումներով 8-րդ բանակը, իբրև Արևմտյան Փրոնտի ամենամոտիկ հարևանը, նշանակվեց Հարավ-Արևմտյան Փրոնտի գլխավոր հարված հասցնող դեպի Լուցի—Կովել: Այնուհետև ես մեծ նշանակութուն էի տալիս 9-րդ բանակի, Ռուսիսկայի հարևանի, հաջողությանը, Ռուսիսկայի, որը ստատմում էր, թե ո՛ւմ կողմն անցնի: Իսկ ի՛նչ վերաբերում էր 7-րդ և 11-րդ բանակներին, ես նրանց կրկնորդական նշանակութուն էի տալիս: Դրա համեմատ էլ ես բաշխել էի իմ ունեցածները և տեխնիկական միջոցները» (Брусиллов, Мои воспоминания, стр. 192):

Երբ այս ողով Հարավ-Արևմտյան Փրոնտում ամեն ինչ նախատեսված ու համարյա պատրաստված էր, անակնկալ հանդամանքներն անհրաժեշտութուն ստեղծեցին, որ Արևմտյանի փո-

խորհելն Հարախ-Արևմտյան Փրոնտն սկսի հարձակումը, թեև առաջինի գործողութիւնները և դերը Հարունակիում էին ներստովի կրքն էական ու վճռական:

Մայիսի 6-ին (19-ին) սլավաբխացիք ուժեղ դրոհ սկսեցին Տրենտինոյի խաղաղական բանակներէ վրա, նախապէս ունենալով կենսապարծելի իտալիացի վճռական ջախջախման իրենց սլախը: Ասխորիական հարվածն աչքան սաստիկ էր, որ նեղն ընկած խաղաղական գլխավոր հրամանատար Կազորնան արդեն մայիսի 2-ին դրում էր Ժոֆրին, թե «խաղաղական բանակի վրա լուրջ հարձակում է սեղի ունենում Տրենտինոյում և որ նա երջանիկ կլինէր, եթէ ուստական հարձակումն ըստ հնարախորին կարճ ժամանակում սկսվեր»:

Մայիսի 10-ին (23-ին) Կազորնան ղեկում է գնն. Ալեքսեևիչն նույն խնդրով և նշում է, որ «Ռուսաստանի նման գործողութիւնը լիովին կհամապատասխաներ դաշնակիցներէ միջև կնքված պայմաններին» փոխադարձ օգնութեան մասին, և որ այդ հարկավոր է անել «ո՛չ միայն իտալիացի շահերի, այլև ըստ դաշնակիցներէ շահերի համար», այսպէս, սպասնում է նա, իտալիան կզրկվեր դաշնակիցներէ ծրագրած ընդհանուր հորձակմանը մասնակցելու հնարախորութիւնները:

Մայիսի 13-ին (26-ին) խաղաղական թաղախորը հեռագրով խնդրում է Նիկոլայ II շտապեցնել Հարախ-Արևմտյան Փրոնտի բանակներէ հարձակումը: Իտալական զերազույն հրամանատարութիւնը նույն հարցով մի քանի այլ ղեկավարներ էլ է անում Փրանսիական և ուստական Կայսններին, սկսում են շտապ գրագրութիւններ և բանակցութիւններ դաշնակիցներէ միջև, որի հետևանքով արագորեն լուծում է ստանում Հարախ-Արևմտյան Փրոնտում Բրուսիլովի բանակներէ հարձակման անցնելու հարցը:

Գնեբալ Ալեքսեևը, ուստական զերազույն գլխավոր հրամանատարի գլխավոր շտաբի սեփուր, մայիսի 21-ին այսպէս է ձևակերպում այդ շտապ որոշման խթանները և ուստական բանակներէ հարձակման նոր կարգը. «Իտալացիներէ համառ խընդելը... մեզ հարկադրեց որոշում ընդունել դրոհ սկսելու մայիսի 22-ին Բրուսիլովի բանակներով. գլխավոր հարվածը՝ Լուցիկ ուղղութեամբ: Եվերտը կսկսի 29-ին, բայց, գուցէ, հետագային մինչև մայիսի 31-ը, եթէ Բրուսիլովի զեպքերի ըն-

թացքը այդ թույլատրելի կուրսորակներ միայն ջուլյ է անում» (Наступление Юго-Западного фронта., стр. 171, 173, 185, 193):

Բրուսիլովը համաձայնություն տվեց հարձակումն սկսելու, բայց մի պայմանով, որ «...Արևմտյան Փրոնտն էլ միաժամանակ առաջ շարժվի, որպեսզի կաշկանդի իր դեմ դասավորված զորքերը»: Սակայն նա պատասխան ստացավ, որ էվերտի հարձակումը հնարավոր է միայն հունիսի 1-ին. դեմ. Ալեքսեևը ներան երաշխիքներ տվեց, որ այդ օրը չի փոխվի, բայց, ինչպես կտեսնենք, այդ երաշխիքը լող խոսք մնաց» (Брусиллов, Мои воспоминания, стр. 191):

Ահա այդպիսի պայմաններում սկսվեց Հարավ-Արևմտյան Փրոնտի նշանավոր դրոհն ավստրո-գերմանական զորքերի վրա: Ռուսական կայանը գլխավոր խնդրի լուծումը կամ գլխավոր հարված հասցնելը հանձնել էր Արևմտյան Փրոնտին, իսկ Բրուսիլովն ստացել էր միայն օժանդակ համեստ խնդիր. «Նա բարեխղճորեն ձգտում էր կատարել այդ երկրորդական խնդիրը, բնդ որում բոլորովին կասկած չունենալով Արևմտյան Փրոնտի գլխավոր հրամանատար դեմ. էվերտի ապագա սարտատի մասին» (Л. В. Ветошников, Брусилловский прорыв, стр. 67):



Մայիսի 22-ին (հունիսի 4-ին) Հարավ-Արևմտյան ամբողջ Փրոնտում լուսարացին սկսվեցին մարտական գործողությունները՝ խիստ ուժեղ և սխտեմատիկ հրետանային նախապատրաստություններ, որը սկսեց է հնարավորություն ստեղծեր հեռակալի դրոհի համար: «Հետևակի հարձակման համար գլխավոր կասեցնող հանդամանքը, — պատմում է Բրուսիլովը, — աբդարացիորեն համարվում էին ըարափակոցները՝ իրենց ամբողջյան և բազմաթիվ լինելու շնորհիվ. այդ պատճառով պահանջվում էր, որ թեթև հրետանու կրակով բազմաթիվ անցքեր բացվեին այդ փակոցներում: Ծանր հրետանու և հորիցների (гаубицы) վրա խնդիր էր դրված ոչնչացնել առաջին ամրացրած շերտի խրամատները, և վերջապես հրետանու մի մասն էլ նախանշված էր հակառակորդի հրետանային կրակը ճնշելու համար»: Հրետանու այն մասը, որը կկարողանար լուծել իր առաջ դրած խնդիրը, անմիջապես իր կրակը սկսեց է ուղղել

դեպի այլ նպատակ, որի կատարումը դործել ընթացքում ամենից ամելի անհետաձգելի կնկատվեր:

«...Ընդհանրապես հրետանու կրակը ամենահակադեման շահանակություն ունի դրոշի հաջողության համար, հրետանին սկսում է դրոշը և նրա սրտոչաճ նախապատրաստությունից հետո, այսինքն լարափակացներում բախվանաչափ քանակությամբ անցքեր բաց անելուց և հակառակորդի ամբուլթյունները, նրա արսատարանները և դնդաքային բները ոչնչացնելուց հետո, պետք է ուղեկցի հետևակի դրոշը, իր խափանիչ կրակով արդելք հանդիսանալով թշնամու ռեզերվները մոտեցմանը»:

Մայիսի 22-ի հրետանային նախապատրաստությունը վերջին իր նպատակին հասավ, հաջողությամբ լուծեց իր վրա դրված խնդիրները: Բրուսիլովին այդ առթիվ նկատում է. «Մեծ մասամբ անցքեր բացված էին բախվան քանակով և համրովին, իսկ առաջին ամբացրած շերտը բոլորովին սրբվեց և իր պաշտպանների հետ միասին բեկորների և հոշոտված մարմինների մեկույտ դարձավ» (Брусиллов, Мои воспоминания, стр. 194):

Բրուսիլովի դժադրած պատկերը վերաբերում է ընդհանրապես ամբողջ Ֆրոնտին, սակայն, իհարկե, տարբեր էին այդ հաջող նախապատրաստության արդյունքները Ֆրոնտի զանազան տեղամասերում, որտեղ դործում էին առանձին բանակները: Մեծ էր էֆեկտը հատկապես գլխավոր հարվածի տեղամասում՝ Լուցկի ուղղությամբ, բայց մյուս բանակներին հրետանային դրոշն էլ բախվանաչափ կայուն հող նախապատրաստեց ավարտ-զերմանական ամբացրած դիրքերի հաջող ճեղքման համար:

Գրոշի առաջին օրերում ախտրիական և դերմանական զըլխավոր հրամանատարները, նաև հարձակման ենթարկված ախտրիական բանակների հրամանատարը ճիշտ չըմբռնեցին իրենց սպանանացող վտանգը, թեև արդեն մայիսի 22-ին (հունիսի 4-ին) իրենց տրամադրության տակ ունեին Բրուսիլովի հրամանը հարձակման մասին: Սակայն շուտով սխալը գլխատկցվեց, որովհետև դրոշի թափը, ուստական գորքերի առաջխաղացության տեմպը և ախտրիական ուժերի խոշոր կորուստները ակներև դարձրին կատասարոֆիկ դրությունը: Մայիսի 26-ին (հունիսի 8-ին) Բեռլինում գումարված ախտր-զերմանական ռազմական խորհրդակցությունը որոշեց խտարական և Ֆրոնտսիական Ֆրոնտներից հախաքել բոլոր ազատ ռեզերվները (գեր-

մանական մինչև 5, իսկ նախորիակումս 3—4 դիվիզիա), շտապ կարգով կենտրոնացնել ուստական 8-րդ բանակի դեմ և հակահարձակման անցնել (Л. В. Ветосников, Брусилловский проыв, стр., 82—83):

Իսկ մինչ այդ Հարավ-Արևմտյան Փրոնտի չորս բանակն էլ ճեղքել էին, ճիշտ է, տարբեր չափով ու թափով, ամսորո-գեր-մանական ամրացրած դիրքերը և հենց առաջին օրերում խոչոր հաջողությունների էին հասել, թե թշնամու դիրքերում խորանարտ և թե նրա կենդանի ուժին մեծ հարված հասցնելու իմաստով:

Ահա մի քանի տվյալներ դրոհի ստաջին օրերի արդյունքների մասին:

Միայն մայիսի 23-ին և 24-ին Բրուսիլովի բանակները գերի բռնեցին 900 սարս և ավելի քան 40000 զինվոր, գրասխեցին 77 հրանոթ, 134 զնդացիր և 49 ուժանետ, իսկ մինչև մայիսի 27-ը դերիների թիվը հասավ 1240 սպայի, ավելի քան 71000 զինվորի: զրամիլած էր 94 հրանոթ, 167 զնդացիր, 53 ուժանետ և ականանետ ու հակայական չափով այլ ուղղմական ակար (Брусиллов, Мои воспоминания, стр. 194):

Առանձին բանակների հաջողության մասին դադանար տալու համար բերենք հետևյալ տվյալները:

8-րդ բանակն առաջին 11 օրվա հարձակման հետևանքով խոչոր օպերատիվ հաջողություն ունեցավ, ջախջախյալ հակառակորդին Կովելի և Վլադիմիր-Վոլինսկի ուղղությամբ: «Ավրստրիացիների դիրքերը ճեղքվեցին 80 կիլոմետր ձգվող Փրոնտում և 8-րդ բանակի կենտրոնի կորսուանները 70—75 կիլոմետր տարածությամբ թափանցեցին հակառակորդի դաստիարակության խորքը», — նշում է Վեստչեկովը:

Ախտրիացիք նահանջում էին ամենահուսահատական պայմաններում, պանիկայի ենթարկված զինվորները փախչում էին Լուցկի միջով: Հենց անստրիական ուղղական տեղեկագրերը խիստ մուսյլ դույներով էին ներկայացնում իրենց ջախջախված և ցար ու ցրիվ եղած բանակի վիճակը: Այսպես, օրինակ, մայիսի 30-ին (հունիսի 12-ին) նշվում էր. «Ներկայումս ուստները գեռուս չեն գրասխել Կովելը: Սակայն շատ կասկածելի է, թե արդյոք ընդհանրապես կկորոչանա գերմանական 10-րդ կորպուսը դուրս դալ Կովելը»: Խուբը վերաբերում է օգնության շտապող գերմանական զորքերին, որոնց վրա էր միտվ հույսը,

որովհետև «...ապստրիացիների առկա սեղերվները քիչ-չատ յուրը դիմադրութան բացարձակապես անընդունակ էին» Ա. В. Ветошников, Брусиловский прорыв, стр. 92):

8-րդ բանակը գրոհի միայն առաջին երեք օրում զերի վերջ-րեց 922 սպա և 43625 զինվոր, զբաղեց 66 հրամուխ, 150 դեպա-յիք, 21 արանանևա և խոշոր քանակությամբ այլ ուղմական ափար (նույն տեղում, էջ 70 և 74):

Ավելի համեստ էին 11-րդ բանակի հաջողությունները մա-յիսի 22-ից մինչև հունիսի 3-ը: Այնուամենայնիվ այդ բանակն էլ առաջ շարժվեց ամբողջ Փրոնտով և հարկադրեց հակառա-կորդին նահանջել աջ թևում 35—40 կիլոմետր, իսկ ձախ թևում մինչև 10—15 կիլոմետր: Մայիսի 22-ին և 23-ին հաջողվեց ձեռքի հակառակորդի Փրոնտը և երկօրյա մարտերի ընթացքում զերի վերջին 130 սպա և 5580 զինվոր (նույն տեղում, էջ 77 և 96):

7-րդ բանակը առաջին երկու օրվա մարտերից հետո ձեռքեց ապստրիական խիստ ամբացրած դիրքերը և զերի վերջրեց 243 սպա, 8711 զինվոր, իսկ մինչև հունիսի 2-ը (15) ապստրիական դիրքերի ձեռքումն ախարտվեց 50 կիլոմետր Փրոնտի վրա: Մա-յիսի 22-ից մինչև 29-ը զերիների թիվը հասավ 414 սպայի և 17000 զինվորի (հաշված են միայն բանակի երկու կորպուսի վերջրած զերիները):

«...7-րդ բանակի սկզբնական հաջողությունը նշանակալի էր, — նշում է զնդապետ Վետոշնիկովը, — բայց բանակի հրա-մանատարությունը չկարողացավ մնական պարտության մատ-նել ապստրիացիներին, չնայած զրա համար բարեհաջող սրայ-մաններ կային» (Ա. В. ветошников, Брусиловский прорыв, стр. 78—79 և 99):

Խոշոր հաջողություններ ունեցալ մայիսի 22-ից մինչև հունիսի 4-ը 9-րդ բանակը, որն իր գրոհն սկսեց դադարին հար-ձակումով և մեծ սքանիկա առաջ բերեց ապստրիական զորքերի մեջ, թեև դադ, բաց թողնելուց քիչ հետո՝ թեթև քամի բարձ-րացալ և դադի մի մասը հետ բերեց դեպի ուռուական դիրքերը: 9-րդ բանակի առաջին օրվա գրոհի մասին, որին նախորդել էր վեցժամյա հրետանային կրակ, ապստրիական աղբյուրները հա-ղորդում են հետևյալը. «Ժամը 12-ին կրակը դադարեց, և ուռ-ական հետևակը ավելի շուտ հասալ ապստրիական խրամատ-ներին, քան ապստրիական զինվորները սղվեսի ընկերից դուրս

յառակեցին: Հունիսի 4-ի (մայիսի 22-ի) հետևանքը սարապինգի էր: Համարյա ամբողջ գերքը ձեռքից լինաց»: Նշված ժամանակաշրջանում 9-րդ բանակը խոչոր հարված հասցրեց ավստրո-գերմանական ուժերին, ոչնչացնելով կամ գերի վերցնելով դերանց 50%-ը: միայն գերմաների թիվն էր 758 սպա և 37832 զինվոր: Մեծ էր նաև տերիտորիալ հաջողութունը. 9-րդ բանակը Փլյունտի կենտրոնում առաջ շարժվեց 50 կիլոմետր, իսկ աջ թևիում՝ 15—20: Սակայն 9-րդ բանակը հակառակորդին Բուկովնայի ուղղությամբ ընդհանրապես սրտուժյան չմասնած, հարվածի ուղղությունը փոխեց դեպի Չերնովից և 7-րդ բանակի հետ գործողության միասնություն չտեսնեց, այդ պատճառով ավստրո-գերմանական ուժերին հաջողվեց այդ Փրոնտում խուսափել վերջնական ջախջախումից: Այդ վկայում են նույնիսկ ավստրիական սրաշտանական տեղեկությունները. «Եթե Շչեքբաչովը և Լեչիցիին (այսինքն 7-րդ և 9-րդ բանակների գլխավոր հրամանատարները:— Վ. Ռ.) այդ կրիտիկական օրերին շարունակելին հարձակումը ջարդված հակառակորդի վրա (կարդա՛ սլավադոգերմանական դրքերի վրա:— Վ. Ռ.), դույցե ամբողջ Փրոնտը ջախջախված կլիներ» (տես Ա. В. Ветюшиков, Брусиловский прорыв, стр. 80, 100 и 103—104):

Հարավ-Արևմտյան Փրոնտի առաջին տանուդակի այդ հաջող գրոհի ընթացքում, երբ բոլոր ուղղություններով ձեռքվեցին ավստրո-գերմանական ամբացրած գերքերը և թշնամու դեմ մղվող մարտերը մոտեցան իրենց բարձրագույն կետին, բոլորովին անգործության էին մատնված Արևմտյան և Հյուսիսային Փրոնտները: Մասնավորապես գլխավոր համարվող Արևմտյան Փրոնտի հրամանատար կլերտը ո՛չ մի մտադրություն չուներ հարձակման անցնելու և դանադան պատճառներով շարունակ երկբարձգել էր տալիս գրոհի ժամկետը, սպա միջնորդություն հարուցեց Կալանի առաջ փոխելու իր գլխավոր հարվածի ուղղությունը Վիլնոյից Բարանովիչի և իվերջո փաստապես ո՛չ մի ավազդություն ցույց չափեց Բրուսիլովի բանակների հաղթական առաջխաղացությանը:

Այդպիսով, նախապես երեք Փրոնտի համար ծրագրված ընդհանուր գրոհը փաստապես վերածվեց Հարավ-Արևմտյան

Ֆրոնտի մենամարտի՝ ախարո-դերձանական շարունակ աճող ու-
ժերի դեմ: Բրուսիլովի պահանջները, որ կայանը հարկադրել
էին բառն անմիջապես հարձակման անցնել, ապա պնդումը, որ
էլեբառի Ֆրոնտի հարվածի ուղղութիւնը փոխելը վնասակար
է, —անհետեանք մնացին, և դեմերալ Ալեքսեևը Նիկոլայ II-ի ա-
նունից հունիսի 5-ին հայտնեց Բրուսիլովին, որ արդեն էլեբ-
առն թուլլատրված է հարվածի ուղղութիւնը փոխել և դրոհը
նոր ուղղութիւնը սկսելու համար՝ նրան ժամկետ է տրված
ամենաուշը մինչև հունիսի 20-ը: Ալեքսեևը ասաց նաև, որ «թա-
ղախոր կայսրի մէխը արդեն չի կարելի փոխել» և իբրև մի-
թարանք ավելացրեց. «դրա փոխարեն մենք ձեզ կուղարենք
իրբև զորախիզ 2 կորպուս»: Բրուսիլովին իրախցեղերեն պա-
տասխանեց, թե այդ նույն ժամկետում «Հակառակորդը կարող
է իմ դեմ բերել տասը կորպուս» (Брусилов, Мои воспоминания,
стр. 196—197):

Այդ բոլորի մասին Ալեքսեևը դեռ հունիսի 3-ին (16-ին),
հասուկ սուրհանդակի միջոցով արդեն կարգադրութիւն էր ու-
ղարկել երեք Ֆրոնտի զլխախոր հրամանատարներին և նշել էր
նրանցից ամեն մեկի անելիքն իրերի նոր դրութեան կարակ-
ցութեամբ (Наступление Юго-Западного фронта..., стр. 328—
329):

Ալեքսեևի, ուսական զլխախոր շտաբի պետի վարած այս
զժի առթիվ Բրուսիլովը դամնութեամբ գրում է. «Ես լսով հաս-
կանում էի, որ ցարը այստեղ ո՛չ մի գործ չունի, որովհետև
ուաղմական գործում նրան կարելի է մանուկ համարել, և ամ-
բողջ հարցն այն է, որ Ալեքսեևը, թեև հիանալի հասկանում է,
թե ինչպե՞ս է գործերի գրութեանը և էլեբառի ու Կուրոպատ-
կինի գործողութեանն իր հանցապարտութեանը, բայց... ամեն
կերպ ջանում է թողարկել նրանց անդործութեանը...»: Սակայն
Բրուսիլովը համառում էր, որ «եթե լինեք ուրիշ գերագույն
զլխախոր հրամանատար, այդպիսի անմիջականութեան համար
էլեբրան անհարաղ կհետապնէր և համապատասխան ձևով կը-
փոխարկնուէր, իսկ Կուրոպատկինը ո՛չ մի դեպքում գործող
բանակում ո՛չ մի պաշտոն չէր ստանա»: Բրուսիլովի հետագա
զխտողութեանից երևում է, որ նրա հավատը որևէ հիմք չու-
նէր, քանի որ «...այն ժամանակ գոյութեան ունենցող ուժերի
պարմաններում բանակում անարատեկիութեանը յիստատար էր,

և երկուսն էլ շարունակում էին մնալ Կալանի սիրված դարս-
վարները» (Брусиллов, Мои воспоминания, стр. 197 և 198):

Բրուսիլովը փորձեց Ալեքսեևսկին համոզել մասնագոր նա-
մակով, որի մեջ վախ էր հայտնում, թե էվերտի դիժը կարող
է հասցնել այն բանին, որ «չաճած ճակատամարտը տանուլ
տված դուրս կդա», որ էվերտի վարմունքը վատ է ազդում իր
զորքի վրա և ինքն «...արդեն երկու անոնիմ նամակ է ստացել
նախազգուշացումով, որ իրը թե գեներալ-ադյուտանտ էվերտը
գերմանացի և դախճան է և որ մեզ երեսի վրա կիջողենն սլա-
սերազմը տանուլ տալու համար: Աստված չանի, որ այսպիսի
համոզմունք արմատանա զորքի մեջ», — սաղնապով վերջաց-
նում է իր նամակը Բրուսիլովը:

Բայց նամակը, իհարկե, անպատասխան մնաց: Ալեքսեևը,
այսպիսով, անուշադրության մասնելով Բրուսիլովի արդարա-
ցի բողոքները և նախազգուշացումները, մերժելով օգտագործել
նրա մասնանշած հաստատուն ուղին թշնամուն ջախջախելու
գործում, սպասվող վտանգը կանխելու համար փորձում է այլ
էլը դռնել, խտրացիների վրա ազդել և նրանցից օժանդակու-
թյուն ստանալ: Նա հունիսի 5-ին (18-ին) խտրական դիվիզիոն
հրամանատարության ուշադրությունը հրաթիբելով այն սպառ-
նալի փաստի վրա, որ Հարալ-Արեմտյան Փրոնտի դեմ կենտ-
րոնացվում են գերմանական և ախտրիական մեծ ուժեր, շա-
րունակում է, «Կարելի է ենթադրել, որ խտրական Փրոնտից
էլ ախտրիացիները կփոխադրվեն: Իրադրությունը նպաստավոր
է և սրահանջում է խտրացիներից ամենանոսանդուն, ամենահա-
մառ, լայն թափով հարձակում»: Մտտնանշվում է նաև ժամ-
կեսը՝ «մեր հունիսի (հին սոմարով. — Վ. Ռ.) մոտակա առա-
ջին երկու շարաթը»: «...Այժմ կամ երբեք», — պոթեթեթիկ
կերպով վերջացնում է նա: Սակայն Ալեքսեևի կոչը մնաց ձայն
բարբառո հանապատի:

Մինչ այդ Հարալ-Արեմտյան Փրոնտի դեմ իրոք կենտ-
րոնացված ախտրո-գերմանական ուժերը փորձեցին հակահար-
ձակման անցնել Բրուսիլովի Ծ-րդ բանակի դեմ, խելի նախա-
ձեռնությունը նրանից և Կոսիելի ուղղությամբ գործող գրառ-
մասերին ջախջախիչ հարված հասցնել: Հակահարձակումն
սկսվեց հունիսի 3-ին (16-ին): Բայց Ծ-րդ բանակը հենց առա-
ջին օրում հեռ շարտեց ախտրո-գերմանական զորքերին և մեծ
թիվով գերիներ վերցրեց: Մինչև հունիսի 6-ը (19-ը) շարու-

նակիող մարտերում լիովին հաղթահարվեց ավստրո-գերմանական զորքերի այս կամ այն տեղամասում ձեռք բերած փոքրիկ հաջողությունը: Նույնպիսի արդյունք ունեցավ ավստրո-գերմանական հակահարվածի փորձը 11-րդ բանակի տեղամասում:

Արդեն հունիսի 6-ին (19-ին) ավստրիական հրամանատարությունը հարկադրված էր ընդունել իր հարձակման սլանդի տասարվումը և նոր սլանդ մշակել 8-րդ և 11-րդ բանակների դեմ հակահարձակումը կրկնելու համար: Բայց այդ նոր հակահարձակումը, որ տեղյ մինչև հունիսի 11-ը, ամենևին հաջողություն չունեցավ 11-րդ բանակի Փրոնտում, իսկ 8-րդ բանակի տեղամասում մերջացավ շնչին առաջխաղացումով:

Ավստրո-գերմանական անհաջող հակահարձակումների օրերին՝ 9-րդ բանակն սկսեց իր հաջող դրոհը և հենց առաջին օրը՝ հունիսի 4-ին (17-ին) այդ բանակի զորամասերն անցան Պրուտ գետը և դրափեցին Չեքոսլովիցը: Հունիսի 7-ին (20-ին) 9-րդ բանակը առաջադրություն ստացավ 7-րդ բանակի հետ գործակցելով՝ Ջախջախել ավստրո-գերմանական դիվազիոն ուժերը Ստանիսլավովի և Գալիչի ուղղությամբ, ինչ որ մինչև հունիսի 11-ը մասամբ միայն հաջողվեց:

Այսպիսով, Բրուսիլովի բանակները մայիսի 22-ից (հունիսի 4-ից) մինչև հունիսի 11-ը (24-ը) հաջող դրոհով ճեղքեցին ավստրո-գերմանական ամրացրած դիրքերն ամբողջ Փրոնտում, զգալի չափով առաջ շարժվեցին, հետ մղեցին թշնամու հակահարձակման փորձերը և ընդհանուր առմամբ ամբողջ Փրոնտի բարձր կարեւոր տեղամասերում իրենց ձեռքում պահեցին նախաձեռնությունը: Գնդապետ Վեստշնիկովն այսպես է ամփոփում այդ շրջանի ռազմական դրոհությունների արդյունքները. «Հարավ-Արևմտյան Փրոնտի զորքերը մինչև հունիսի 11-ը (24-ը) Փրոնտի աջ թևում և Գնեստրից հարավ խոշոր օպերատիվ հաջողության հասան: ... Ավստրո-գերմանական հրամանատարությունը մեծ տաղնապի մեջ էր արևելաբրուսիլյան (ուսսական) Փրոնտի իր զորքերի դիմացկանություն նկատմամբ և ձգտում էր զանազան միջոցներով դադարեցնել ռուսական զորքերի հարձակումը: ... Լուցիկի ուղղությամբ ձեռնարկած հակահարվածը ավստրո-գերմանական հրամանատարությանը չհաջողվեց» (Л. В. Ветошников, Брусиловский прорыв, стр. 116):

Բրուսիլովի բանակների հաջող դրոհի լախաբույն ապա-

ցույցներից մեկն է այդ շրջանում վերցրած գերիների թիվը և դրանք ուղարկված ռազմական ախարի քանակությունը:

Ըստ Վետոշնիկովի տվյալների, մայիսի 22-ից մինչև հունիսի 10-ը Հարավ-Արևմտյան Փրոնտի չորս բանակները գերի էին վերցրել 2993 սպա, 188681 զինվոր և գրասել էին 216 հրատոթ:

Նույն շրջանի գերիների և ուղարկարի քանակի մասին Բրուսիլովը տալիս է հետևյալ տեղեկությունները. «...դեբի էինք վերցրել 4013 սպա և մոտ 200000 զինվոր. ուղարկված ափսոսանք էր՝ 219 հրատոթ, 644 ղեկավար, 196 ուղարկված և ակադեմիկոսներ, 46 ուղարկված, 38 լուսարձակ, մոտ 150000 հրացան, շատ փառասերներ և անհամար քանակությամբ զանազան այլ ուղարկված մատերիալ» (Л. В. Ветошников, Брусилловский прорыв, стр. 116. А. Брусиллов, Мои воспоминания, стр. 199):

Ահա այսպիսի նշանակալի հաջողություններով փակեց իր գրոհը և առաջխաղացությունը առաջին շրջանը Հարավ-Արևմտյան Փրոնտը:



Բրուսիլովը հարկադրված եղավ երկրորդ շրջանում էլ իր գրոհը մենակ շարունակել ախարո-գերմանական ուժերի վրա, առանց Արևմտյան և Հյուսիսային Փրոնտների գործակցության: Միայն այս շրջանում Հարավ-Արևմտյան Փրոնտին հանձնվեց Արևմտյան Փրոնտի 3-րդ բանակը՝ գեներալ Լեշի հրամանատարությամբ, որը պետք է գործակցեր իր հարավային հարևանին՝ 3-րդ բանակի հետ և նրա հետ միասին ջանար լուծել առաջիկա գրոհի խնդիրները:

Ռուսական գերագույն գլխավոր հրամանատարի՝ Կայանի հրամանները տեղից շարժելու նախ Արևմտյան Փրոնտի գլխավոր հրամանատար էլիբրտին, ապա ալեկի ուշ Կուրոսյատկինին, Հյուսիսային Փրոնտի գլխավոր հրամանատարին, մեծ արդյունք չափեցին:

Դեռ հունիսի 6-ին (19-ին) Ալեքսեևը գրում էր էլիբրտին. «Հարավ-Արևմտյան Փրոնտի ընդհանուր կացությունը և դրությամբ չեն թույլ տալիս, որ այդ Փրոնտը մինչև հունիսի 20-ը իր ուժերին թողնի: ...Դրանով կարող են քանդվել մինչև այժմ ձեռք բերած արդյունքները: Այս պատճառով ձեր գլխավոր հարվածը պետք է տեղի ունենա ո՛չ ուշ, քան հունիսի

16-ը կտո՞մ 17-ը...: Այդ սրահանջում են ընդհանուր շահերը...»: Բայց «ընդհանուր շահերը» ամենևին ոգևորության աղբյուր չըհանդիսացան էվերտի համար, որ նա իր ընտրած նոր ուղղությամբ (դեպի Բարանովիչի) «գլխավոր հարված» հասցնելու գործում շտապի, և Բրուսիլովն արդեն հունիսի 8-ին Ալեքսեևին ուղղած հեռազրույցում նախատեսում էր էվերտի այդ նոր պլանի ստացումը, հետևաբար և անօգուտ լինելը Հարախ-Արևմտյան Ֆրոնտին օժանդակելու գործում. «Վերջին օրերի իրադրությունը Արևմտյան Ֆրոնտում ինձ համոզում է, որ դժվար է հույս դնել նրա հարձակման հաջողության վրա» (Наступление Юго-Западного фронта..., стр. 356 и 375):

Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ Բրուսիլովը ամեն չնայած ունեն հոռետես լինելու էվերտի աջակցության նկատմամբ: Հունիսի վերջերին սկսած նրա հարձակումը Բարանովիչի ուղղությամբ վերջացավ լիակատար անհաջողությամբ, տեւելով ընդամենը հունիսի 19-ից (2|VII) մինչև հունիսի 25-ը:

Հունիսի 19-ին (հուլիսի 2-ին) Ալեքսեևը փորձեց տեղից շարժել նաև Կուրոպատկինին և դրպել, որ նա օգտագործի իր Ֆրոնտում ստեղծված նպաստավոր դրությունը և անմիջապես մասնակցի ընդհանուր զրոհին. «Հյուսիսային Ֆրոնտը լիակատար հնարավորություն ունի այս կամ այն տեղամասում ստեղծելու ուժերի ամփոփ քան եռակի դերազանցություն և համառ ու մեթոդիկ հարձակում ծախսելու ո՛չ միայն նրա համար, որ իր վրա լեվեռի հակառակորդի առանց այն էլ թույլ ուժերը, այլ և նրան մասնավոր պարտություն սրատճանելու համար» (Наступление Юго-Западного фронта..., стр. 456):

Բայց Հյուսիսային Ֆրոնտը իր Արևմտյան հարևանից էլ դերազանց գուրս եկավ, ուղղակի ոչինչ չարեց:

Այդ ամենը տեղի էր ունենում այն ժամանակ, երբ սկսած է սկսվել անզրո-Ֆրանսիական և իտալական ընդհանուր հարձակումը (ըստ դաշնակիցների մշակած պլանի) գերմանո-ավստրիական ուժերի վրա հունիսի 18-ին (հուլիսի 1-ին), երբ Բրուսիլովի հարձակման հետևանքով գերմանացի Վերդեմի տակ Ֆրանսիային «արյունաբամ անելու» իրենց ծրագրերը չէին կարողացել իրագործել և Ֆրանսիական Ֆրոնտի, սարահենց անգործության մասնակցած ուստական Արևմտյան և Հյուսիսային Ֆրոնտների դեմ զանազան լրենց ուժերի մի մասը լեբել էին Ավստրո-Հունգարիան փրկելու, երբ ավստրո-հունգարական

գլխավոր հրամանատարությունը հարկադրվել էր դադարեցնել իր ուժեղ գրոհը Իստրլայի վրա և իր ուժերի մեկ զգալի մասը փոխադրել էր Գալիցիա և Բուկովինա՝ ուստական հաղթական առաջխաղացությունը կասեցնելու համար:

Հենց այդ սրայմաններում է, որ մշակվեց Հարավ-Արևմտյան Փրոնտի գրոհը շարունակելու օպերատիվ պլանը: Ըստ այդ պլանի 3-րդ բանակը պետք է տիրեր Գորոդոկ-Մանսվիչի ուստյան, 8-րդ բանակը ինդեր ստացալ շարժվել Կովելի վրա, նաև Վլադիմիր-Վոլինսկիի վրա, 11-րդ բանակի գլխավոր հարվածը պետք է ուղղվեր Բրոդի քաղաքի դեմ, 7-րդ և 9-րդ բանակները պետք է շարունակեին հարձակումը Գալիչի և Ստա-նիսլավովի վրա: (А. В. Ветошников, Брусилловский прорыв: стр. 117—118 и 119, Брусиллов, Мои воспоминания. стр. 199),

Հունիսի 21-ին 3-րդ և 8-րդ բանակները սկսեցին հարձակումը դեպի Կովել, թեև այդ քաղաքին հասնել չհաջողվեց, բայց սու 1-ն հուլիսի ուստական բանակները հաստատվեցին Ստալոդ դեպի վրա: Թե ինչ ծանր գրոհյուն ստեղծվեց ախտորոշ-դեբանական զորքերի համար, վերջում է անդամ դե-նեբալ Լյուդենդորֆը. «...այդ ամենատուժեղ կրկրիաներից մեկն էր արևելյան Փրոնտում: ...Մենք ամեն ինչ ասլլա էինք և լավ գիտեինք, որ ո՛չ ոք չի կարող մեզ օգնել, և թե թշնամին մեզ վրա գրոհի»:

Հունիսի վերջին տասնօրյակում առաջ շարժվեցին նաև մյուս բանակները. մասնախորտակ հաջող ընթացքով 11-րդ բանակի գրոհը, որի հետևանքով այդ բանակը վերցրեց 34000 գերի (Брусиллов, Мои воспоминания, стр. 200—201, Ветошников, Брусилловский прорыв, стр. 127):

Հունիսի վերջերին ուստական գերազույն հրամանատարությունը եվերտի անհաջող գրոհից հետո՝ ուշացած կերպով ուշադրության կենտրոն դարձրեց Հարավ-Արևմտյան Փրոնտը և Արևմտյան Փրոնտի գլխարկական զորամասերը փոխադրեց 3-րդ և 8-րդ բանակների տեղամասը, որտեղ գեներալ Բեգոբրադովի հրամանատարությամբ հատուկ բանակ կազմվեց, որը նույնպես Կովելի ուղղությամբ պետք է գործեր:

Զորքերի որոշ վերախմբախորումից հետո՝ հուլիսի 15-ին դարձյալ սկսվում է Բրուսիլովի բանակների հարձակումը, որ շարունակվում է մինչև ամսի վերջը: Կովելի ուղղությամբ մեղաճ մարտերում 3-րդ և հատուկ բանակները թեև որոշ հաջո-

դուժբյուրերն ունեցան, հազարավոր գերիներ վերցրին, բայց դարձյալ Կոփեղին հասնել չկարողացան: Տ-րդ բանակը ո՛չ միայն ուժգին հարված հասցրեց Վլադիմիր-Վոլինսկիի ուղղութեամբ, ո՛չ միայն մոտ 10000 զերի վերցրեց, այլև 5—10 կիլոմետր առաջ շարժվեց, թեև քաղաքին չհասավ: 11-րդ բանակը հուլիսի 15—20-ի ընթացքում 15—20 կիլոմետր առաջ շարժվեց և դրավեց ավստրո-գերմանական սրաշարանության համար կարևոր Բյոդլի քաղաքը: Հուլիսի երկրորդ կեսում 9-րդ բանակը Ստանիսլավովի ուղղութեամբ երկու անգամ խոշոր հաջողություն ունեցավ. հուլիսի 15-ին առաջ շարժվեց 15 վերսա և մոտ 8000 զերի վերցրեց, իսկ 25-ին ճեղքեց ավստրո-գերմանական համարյա ամբողջ սրաշարանողական գիծը և դարձյալ 8000 զերի վերցրեց:

9-րդ բանակի այդ հաղթանակները մոտեցրին ուսմանական հարցի լուծումը. Ռուսինիայի և ավստրո-գերմանական հարաբերությունները խիստ սրվեցին, որովհետև Անտանտի օրիննուս-ցիայի հաղթությունը արդեն ակներև էր դառնում:

Երուսաղեմի բանակների հուլիսյան հարձակումը թեև խիստ արթունահեղ մարտերով առաջ ընթացավ, բայց անբխորիսյալ հաջողությունները խմտտով մեծ արդյունք չտվեց. այնչի մեծ էին հաջողությունները գերիներ վերցնելու և ուղղամասը դրավելու գործում: Հուլիսի 10-եց մինչև հուլիսի վերջը գերիները և ուղղական ավարի քանակը, նախորդ շրջանի համեմատութեամբ, համարյա կրկնապատկվում է, այնպես որ մայիսի 22-եց մինչև հուլիսի 30-ը գերիները թիվն էր՝ 8255 սպա և 370153 զինվոր, իսկ ուղղական ավարը կազմում էր՝ 496 հրատարակ, 1144 զնդացի, 367 ուղղական ու ակամանետ, մոտ 400 ուղղակի, մոտ 100 լուսարձակ և հսկայական քանակութեամբ հրացաններ, փամփուշտներ, արկեր և այլ ուղղական մատերիաներ (Брусиллов, Мои воспоминания, стр. 200—203, Л. В. Ветовников, Брусилловский прорыв, стр. 118, 139, 140, 143, 142, 143):

Հարավ-Արևմտյան Փրոնտում ուղղական գործողությունները հուլիսյան հարձակումով չվերջացան, շարունակվեցին նաև հետագա ամիսներում մինչև հոկտեմբերի վերջը, սակայն այլևս չունեին այն ինտենսիվությունը, ինչ նախորդ երկու ամսում, և ծառայում էին այն նպատակին, որ ըստ հարավարևմտյան ավստրո-գերմանական շատ ուժեր գրադեցնեն և այդպիսով օ-

Ժանդակեն ֆրոնտիական և խտարական ուժերի գրոհին:

Բրուսիլովին իր ֆրոնտի կռիւնների այդ նոր բնույթը հետևելու ձևով է բացատրում. «Առ 1-ն օգոստոսի ինձ համար վերջնականապէս պարզվեց, որ ես իմ հարևաններից (Արևմտյան և Հյուսիսային ֆրոնտներից:—Վ. Ռ.) օգնութուն՝ նրանց մարտական գործողութունները խնայողով՝ չեմ ստանա, իսկ մենակ իմ ֆրոնտով, ինչպիսի հաջողութուններ էլ որ ունենայինք, այս սարի պատերազմը չահել չէր կարելի: Մի քիչ ավելի կամ պակաս առաջխաղացութունը ընդհանուր գործի համար ստանձին նշանակութուն չունեւր...», իսկ մեծ հաջողութեան անկարելի էր համենէլ, որովհետեւ «իմ ֆրոնտի առաջ հակառակորդի գործերն զգալիորեն դերպանց էին իմ ուժերից» (Брусилос, Мои воспоминания, стр. 203—204):

Այսպիսով, օգոստոսից մինչև հոկտեմբերի վերջը հետզհետեւ ֆրոնտում սկսվեց կայունութուն հաստատուել, ինչ որ շարունակեց մինչև 1917 թ.:



Թեև Հարավ-Արևմտյան ֆրոնտի 1916 թ. նշանաւոր Բրուսիլովյան գրոհը առաջին իմպերիալիստական պատերազմի ընթացքը փոխելու մեջ այնպիսի վճռական արդյունքներ չունեցաւ, ինչպիսին որ ցանկանում էր նրա կազմակերպիչն ու ղեկավարը, բայց այնուամենայնիւ մեծ է այդ գրոհի դերը զերմանական իմպերիալիզմի ջախջախումը նախապատրաստելու մեջ:

Բերենք այդ գրոհի մի քանի հանրագումարները:

Հարձակման առաջին 13 օրվա ընթացքում միայն, այսինքն մայիսի 22-ից (հունիսի 4-ից) մինչև հունիսի 17-ը (30-ը) Հարավ-Արևմտյան ֆրոնտի բանակները ձեղքելով ալյաբո-գերալտնական պաշտպանութեան դիժը, առաջ շարժվեցին հակառակորդի դերքերի խորքը հետևյալ ջախով.— 8-րդ բանակը 75 կիլոմետր, 11-րդ բանակը 2—15 կիլոմետր, 7-րդ բանակը 10—15 կիլոմետր և 9-րդ բանակը 50—60 կիլոմետր:

Այս ավյալների առթիւ ռազմական մասնագետը նկատում է. «Տեմպերի այս նորման բանակային գործողութեան համար հարկաւոր է լրովին նորմալ ընդունել» (Л. В. Ветовников, Брусилосский прорыв, стр. 152):

Գրոհի հետագա զարգացումը բերեց տերիտորիալ նոր հանդուգություններ և մինչև հունիսի 30-ը «...վերջացավ Հարավ-Արևմտյան Փրոնտի կողմից թշնամու ձմեռային, չափազանց ուժեղ կերպով ամրացրած դիրքին տիրելու օպերացիան, զիրք, որ մեր թշնամիներն անսպասան անառիկ էին համարում: Մենք Փրոնտի հյուսիսում հետ վերցրինք մեր տերիտորիայի մի զգալի մասը, իսկ մեր կենտրոնը և ձախ թևը կրկին նվաճեցին Արևելյան Գալիցիայի մի մասը և սովորյ՞լ Բուկովինան» (Брусиллов, Мои воспоминания, стр. 203):

Այսպես, ուրեմն, Բրուսիլովյան գրոհը Ռուսաստանին վերադարձրեց 1915 թ. ուսարհան անհանդուգությունների և նահանջի ընթացքում կորցրած իր տերիտորիայի մի մասը, ապա նաև այն շրջանների մի մասը, որ 1914 թ. Երկրորդ կիսում և 1915 թ. սկզբներին ուսուսական զորքը նվաճել էր Ալստրո-Հունգարիայից և միջի ալյոց նաև Բրուսիլովի հաղթանակների հետևանքով:

Բրուսիլովյան գրոհի ամիսներում ալստրո-գերմանական զորքերը շատ ալիել մեծ կորուստներ ունեցան, քան ուսուսական հարձակվող բանակները: Մայիսի 22-ից (հունիսի 4-ից) մինչև հոկտեմբերի վերջն ալստրո-գերմանական զորքի կորուստները (սպանված և վիրավոր) 1500000 ալիել էին, իսկ դերի ընկածները թիվն 450000-ից անց էր: Նշանակում է, միայն գերիները թիվն այնքան էր, որքան ալստրո-գերմանական զորքերի թիվը գրոհի սկզբին:

«Այնուամենայնիվ, — նկատում է այս առթիվ Բրուսիլովը, — նոյեմբերի մոտերքը իմ Փրոնտի առաջ մեկ միլիոնից ալիել ալստրո-գերմանացիներ և թուրքեր էին դանդում: Հետևաբար, բացի 450000 մարդուց, որ սկզբում իմ առաջ կար, իմ դեմ մյուս Փրոնտներից ալիել քան 2200000 մարտիկ նևալեց»: Ապա Բրուսիլովին անում է մի քանի անգամ արդեն մեր կողմից ընդգծված իր հիմնական եզրակացությունը. «Մրանից պարզ երևում է, որ եթե մյուս Փրոնտները շարժվեին և հնարալորուեթյուն չտային զորք նետել ինձ հանձնված բանակների դեմ, ևս լիակատար հնարալորուեթյուն կունենայի շատ առաջ շարժվել դեպի Արևմուտք և թե՛ ստրատեգիպես, թե՛ տակտիկապես զորեղ կերպով ազդել մեր Արևմտյան Փրոնտի դեմ կանգնած հակառակորդի վրա» (Брусиллов, Мои воспоминания, стр. 206):

Այդ տեղի չունեցավ նաև մի այլ պատճառով: Հարավ-Ա-

ընձամայն Ֆրոնտի հարձակման առաջին օրերին, երբ այսարոգերմանական զորքի համար ամենածանր զրուխյուն ստեղծվեց, անդը—Ֆրանսիական բանակները մճռական հարձակման շանջան, որի հետևանքով Գերմանիան հնարավորութուն ստացավ արևմտյան և այլ Ֆրոնտներեց ուժեր կենտրոնացնել Բրուսիլովյան բանակների դեմ և կրկնակի խուսափել: Այս հանգամանքի վրա մատնանշում են նաև գերմանական ռազմական ղեկավարները: Գերմանական զլխավոր հրամանատար Ֆալկենհայնը հետևյալ ձևով է նշում այդ. «Գալցիայում ռուսական հարձակման ամենախանգավոր մոմենտն արդեն անցել էր, երբ Սոմմում առաջին սրայթյունը լավեց» (Л. В. Ветошников, Брусиловский прорыв, стр. 146):

Այս պատճառները, սպա մասամբ և հենց դրոհը կազմակերպելու և իրազործելու հետ կապված այլ կարգի հանգամանքներ, որ դուռ ռազմական-մամազխտական ընույթ ունեն և դուրս են մեր քննության շրջանակից, այն հետևանքին հասցրին, որ Հարավ-Արևմտյան Ֆրոնտը, ինչպես զրում է Վետոշնիկովը, թեև «խոշոր օպերատիվ-տակտիկական հաջողությունների հասավ, բայց չնայած դրան, չկարողացավ այդ հաջողությունները ծավալել և ավելի բայն օպերատիվ-սորատեղիական արդյունքների հասնել»:

Նույն կարծիքին է հենց ինքը Բրուսիլովը. «Այդ օպերացիան ո՛չ մի սորատեղիական արդյունք չտվեց և չէր էլ կարող տալ, որովհետև սարկիլի 1-ի ռազմական խորհրդի որոշումը ամենևին չկատարվեց»: Վերջին բառերն արդարացի մեղադրանք են ցարական գերագույն հրամանատարության և նրա հովանավորած արկիար գեներալների հասցեին: Բրուսիլովը բերելով Լյուդենդորֆի միկայությունը, որ իրոք Հարավ-Արևմտյան Ֆրոնտի գրոհի օրերին գերմանացիների համար «աննախանձևից զրուխյուն» էր ստեղծված, սպա նաև այն միտքը, թե հենց այդ զրուխյունից փրկվելը ցույց է տալիս, թե «մենք—գերմանացիներս ինչի՛ ենք ընդունակ»,— իրավացի հպարտությամբ նկատում է՝ երբ գերմանացիք ունենում են «Ալեքսեևի, Էվերտի և Կուրոպատիկի նման հակառակորդներ» (Л. В. Ветошников, Брусиловский прорыв, стр. 148, Брусилов, Мои воспоминания՝ стр. 207 и 210):

Հարավ-Արևմտյան Ֆրոնտի գրոհի ամբողջ ընթացքը ցույց է տալիս, թե իրոք ինչի՛ են ընդունակ ռուսական ղեկավորները

տաղանդալոր զորալարի ղեկավարութեան տակ: Ամբողջ գրոհի ժամանակ թե՛ ընդհանրապես Ֆրոնտի բանակները, թե՛ առանձին զորամասերը և թե՛ առանձին զինվորներն ու հրամանատարները երևան բերեցին անօրինակ քաջութեան, սովորնութեան և խիզախութեան բազմաթիվ օրինակներ և զենքի ու ռազմածիճքի, սրահնավորման և այլ շատ պակասութեանները սրայմաններում հաջողութեամբ իրադրեցին Բրուսիլովի նոր և տաղանդալոր իզևան թշնամու ամբարցրած ղերքերը նոր ևղանակով ճեղքելու մասին:

Եթե պայմանները թույլ չտվեցին, որ այդ փայլուն գրոհը փոխի պատերազմի ընթացքը, աշուտամենայնիվ նա հող ստեղծեց, առաջին ինքանը հանդիսացավ գերմանական լոպերիալիսի ռազմական հզորութեանը խախտելու, սրբութեանը նախապատրաստելու համար:

Բրուսիլովին հաջողից լուծել այն բոլոր անփշական խնդիրները, որ առաջադրված էին նրա Ֆրոնտին, այն է՝ թեթևացնել Փրանսիացիների դրութեանը Վերդենում, փրկել իտալական բանակը ջախջախումից և չթողնել, որ նա Անտանտի կողմ ուժերի շարքից դուրս գա, սղդել Ռուսիայի վրա և հարկադրել նրան, որ պատերազմին մասնակցի իբրև Անտանտի դաշնակից:

Գերմանիան և Ալսաթո-Հունդարիան հարկադրված եղան Բրուսիլովյան բանակների գրոհը կասեցնելու և արևելյան Ֆրոնտում իրենց համար ստեղծված լուրջ կրիգից խուսափելու նպատակով Փրանսիական, իտալական և Մարնիկի Ֆրոնտից մոտ 45 դիվիզիա փոխադրել Հարավ-Արևմտյան Ֆրոնտ: Հենց այդ էլ մեղմեց Փրանսիացիների դրութեանը Վերդենում և նրանց հնարավորութեան սվեց ուղքի դալ, նախապատրաստվել ու նույնիսկ հակահարձակման անցնել Մոմում: Այդ փրկեց նաև իտալացիներին ավստրիական գրոհից Տրենտինոյում, բանի որ ավստրիական դիվիզիա Բրուսիլովի դեմ բերվեցին, դրա շնորհիվ էլ իտալացիք հնարավորութեան ստացան նույնիսկ հարձակում սխել Տիրոլում անդր-Փրանսիական ընդհանուր հարձակման կապակցութեամբ: Ռուսիան օգնատուի 27-ին պատերազմ հայտարարեց Ալսաթո-Հունդարիային ու Գերմանիային, Անտանտի օրինեսացիան հաղթանակեց՝ Բրուսիլովի բանակների հաջողութեան հետ զուգընթաց:

Սի այլ կարևոր նշանակութեան էլ ունեցավ Բրուսիլովյան

դրոհը: Այն նոր իրեան, որ նա առաջադրեց, ապա նաև հաջողութեամբ կենսագործեց թշնամու ամբացրած դիրքերը ճեղքելու ասպարիզում, ընդհանուր ընդունելութուն գտավ և շատ անգամ կիրառվեց առաջին խմբերիայատան արտերագմում, կիրառվում է և այժմ: Առաջին անգամ մեծ մասշտաբով և որոշ չափով այդ իրեան կենսագործեց Փոչը 1918 թ., երբ կազմակերպվեց անդու-Ֆրանսիական հակահարձակումը գերմանացիների դեմ:

Պակաս կարևոր չէ նաև այն հանդամանքը, որ Հարավ-Արևմտյան Ֆրոնտի մալխա-հունիսյան դրոհը ցրեց այն առասպելը, թե ամբողջ-գերմանական զորքերի 1914 և 1915 թ. թ. հարվածներն իրր թե ջարջարիսել էին ուսուսական բանակը և նա այդևս անդոր էր որևէ լուրջ ռադական դործողութուն սկսելու:

Իրականութունը հակառակն ասացուցեմ:

ՆԿԱՏՎԱԾ ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող վ/ն	Տպված է	Պետք է լինի
6	14 վ.	պլանը	պլանով
27	7 ն.	Տ-րդ բանակի պլանում զարկերը թեև նշվում էր	Տ-րդ բանակի հրամանատարի պլանում թեև նշվում էր
30	11 ն.	հրամանատարի՝ Կայանի	հրամանատարի կայանի
44	15 վ.	և միջի	ի միջի
47	9 ն.	անցյալ	անցյալի

գերմանական դիշտիչ Փաշլոգի սխալակալին բանդաներին, այլև օրեցօր աճում ու հզորանում է նրա հարձակողական թափը:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038941

[204.]

ԳԻՆԸ 2 Ռ.

A $\frac{11}{38941}$

Цена з р.